

Աիդա Պետրոսյան

*Ուսումնական ծրագրեր, հոդվածներ,
թարգմանություններ*

ԴՊԻՐ

Խմբագիր՝ Արմինե Աբրահամյան

Բովանդակություն

- ❖ Ինչո՞ւ էն գրադվում նախակրթարանում
- ❖ Աշխատանքի կազմակերպման հմտություն: Աշխատանք նախագծով
- ❖ Զրույց 2-4 տարեկանների հետ 2-4 տարեկանների բարեկամների համար
- ❖ 2005թ. «Նախակրթարանի ուսումնադաստիարակչական ծրագրերի մշակում և փորձարկում» հանրապետական ծրագիրը, նրա «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում» բաղկացուցիչը
- ❖ Սովորողների գործունեության կազմակերպման սկզբունքները
- ❖ Փոքր զրույցներ մեծ Մարդու մասին
- ❖ Մեծ խաղ. խոսքը՝ խաղալիք
- ❖ Սա մեծ խաղի մի մասն է...
- ❖ Մարզական նախակրթարան
- ❖ Ո՞ր դասացուցակում կամ մեթոդական ձեռնարկում կտեղավորվի մանկան իրական կյանքը
- ❖ «Շրիկան» համույթ-լաբորատորիա
- ❖ Համույթը ինքնադրսևորման, ինքնաբացահայտման ձև թե՞ տարածք
- ❖ «Իմացումի հրճվանք» ծրագրի կազմակերպումը
- ❖ Տառաճանաչություն. ոչ թե նպատակ, այլ ընդամենը մի միջոց
- ❖ Լիքը ուրախ այբբենարան
- ❖ Տառուսուցում. ոչ թե նպատակ, այլ միջոցներից մեկը
- ❖ Մարիա Մոնտեսորի «Երեխայի տունը» (թարգմանություն ռուսերենից)

ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԶԲԱՂՎՈՒՄ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Հայ ժողովրդական մի հեքիաթ կա: Ամուսինը կնոջ համար նոր զգեստ է գնում: Հաջորդ օրը անհամբեր տուն է գալիս, որ կնոջը հին, պատառոտված շորերի փոխարեն նորզգեստով տեսնի: Կինը բարձր տրամադրությամբ, բայց նույն հին հագուստով է դիմավորում ամուսնուն:

- Բա նոր շորդ ո՞ւր է,- հիասթափված հարցնում է ամուսինը:

- Չե՞ս տեսնում, հինս նորով տեղ-տեղ կարկատել եմ:

Դիպուկ հեքիաթ է և, որ ցավալի է, արդիականությունը չկորցրած:

Վերջին քսան տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում շատ բան փոխվեց, բայց նոր հասարակության նոր անդամի ծնունդն այդպես էլ չկայացավ: Չկայացավ, որովհետև մենք այդ խնդիրը չկարևորեցինք, շարունակեցինք յուրա գնալ, հարմարվելով մեր գլուխը պահել ու, գոհ թե դժգոհ, մի կերպ ապրել: Սակայն ամենավտանգավորն այն է, որ այդպես էլ մեծացնում ենք մեր երեխաներին: Անընդհատ խոսում ենք կրթության բնագավառում համակարգային բարեփոխումների մասին, բայց նույն կարկատանի պատմությունն է դուրս գալիս: Ստացվում է, որ բարեփոխում կոչվածը հենքից գուրկ կառուցվածքային փոփոխություն է, որ մեզանում ամբողջական բովանդակային փոփոխություններ չեն էլ նախատեսվում: Նախ՝ կրթության այսպես կոչված բարեփոխումները բուհից սկսվեցին: Դրանից բուհական կրթության մակարդակը չլավացավ. դա է ապացուցում բուհերում իրականացվող կրթությունն ու կրթական մակարդակը: Այնինչ ամբողջական կրթական հայեցակարգ պիտի մշակեինք, համակարգ-ծրագիր կազմեինք, հստակ հիմնախնդիրներ դնեինք, նախանշեինք դրանց լուծման ճանապարհներն ու քայլ առ քայլ իրագործեինք դրանք՝ լուրջ աշխատանք սկսելով նախակրթարաններում: Այո՛, սկսեինք մարդու (երեխայի) ձևավորման, կայացման, զարգացման ամենակարևոր շրջանից՝ 4-6 տարեկանից:

Թե չէ, այս տարիքում անազատ մեծացած, այնուհետև կիսատոտալիտար դպրոց անցած մարդը չի կարող ինքնուրույն, ինքնակրթվող, զարգացող, ազատ մտածող ու գործող լինել:

Մոռանում ենք, որ մարդուն ստրուկ դարձնելը հեշտ է, այդ ստրուկը հետո նրա միջից հանելը՝ շատ դժվար, եթե ոչ անհնար:

Ի՞նչ ենք արել մենք: Իբր բուհական կրթության հարցը լուծել ենք, հիմա էլ հրապարակել ենք հանրակրթության չափորոշիչները, բայց դրանց ապահովումը բացառող դասագրքեր ենք ստեղծում, մեթոդներ կիրառում և որպես շարունակություն՝ դեռ ուզում ենք, որ այդ դպրոցն անցած քաղաքացին գրագետ մտածող, նախաձեռնող, ինքնուրույն լինի, կարողանա արժանապատիվ ապրել: Մենք մեր միջի ծուլին, ստրուկին չենք հանել, համառորեն չենք ուզում փոխվել և մեզանից գոհ՝ ուզում ենք մեր նմանին վերարտադրել, հարահոսն էլ գործի ենք դրել հենց նախակրթարանից կամ մանկապարտեզից, ինչպես կուզեք՝ անվանեք: Նախարարությունը դրանք հանձնել է համայնքներին (և՛ գլխից է ազատվել, և՛ գլխացավից), վերջիններս էլ, որպես «ճիտին պարտք», դրանք յուրա են տանում՝ ընդամենը հացի խնդիր լուծելով: Ու շարունակվում է երկար տարիների անպտուղ, վնասակար գործը: Կա՛մ գիտակցաբար խուսափում ենք իրական կրթական խնդիրներ լուծելուց, կա՛մ շատ ենք միամիտ ու չենք գիտակցում, որ ամեն ինչ սկզբից՝ նախակրթարանից պետք է սկսել՝ առանց կար ու կարկատանի,

հիմնավոր, գիտակցված ու պատճառաբանված:

Իսկ իրականությունն այն է, որ մանկապարտեզում աթոռին գամված երեխան շարունակում է մնալ դաստիարակի, դայակի և մնացած մեծերի գերին, խամաճիկը: Այստեղ երբեմն բարքերն ավելի խիստ են, քան դպրոցում, իզուր է երեխայի իրավունքների, ազատ գործունեությամբ զարգացման, առողջության պահպանման, ինքնադրսևորման, ինքնարտահայտման, անհատականության ձևավորման, ճաշակի զարգացման և նման այլ կարևոր բաների մասին խոսելը: Երեխայի զարգացման ամենակարևոր շրջանը վերածել ենք խիստ ռեժիմով կարգավորվող անիմաստ սերտման (դա էլ լավագույն դեպքում). գտել ենք մեզ՝ մեծերիս համար ամենահեշտ ձևը, իսկ թե վաղն այդ երեխան ինչ հասարակություն է ձևավորելու, ինչպես է ապրելու այդ հասարակության մեջ, մեզ քիչ է հետաքրքրում: Կարևորն այն է, որ նա մի երկու բառ անգլերենից կապկի, մի քանի բառ՝ ռուսերենից, կասակաձեղի ճաշակի մի երկու երգ ու ոտանավոր իմանա, որ մեծերի ամբիցիաները բավարարված լինեն: Շատ քիչ մանկապարտեզներ կան, որտեղ ծրագրային լուրջ խնդիրներ են լուծվում, մանկավարժական լուրջ քաղաքականություն է իրականացվում: Ամեն մեկն անում է այն, ինչ կարողանում է: Զգիտես՝ ինչու, բոլորին այս վիճակը ձեռք է տալիս, ոչ ոք ոչինչ չի ուզում փոխել, նույնիսկ՝ ծնողը:

Փորձեք պարզել՝ ինչ ծրագիր է իրականացվում, ինչ խնդիրներ են դրված նախակրթարանների գործունեության հիմքում, ով և ինչով է օգնում դաստիարակին իր աշխատանքը կազմակերպելու, կատարելագործելու, ինքնակրթությամբ զբաղվելու հարցում, ինչ նյութ, միջոցներ, գրականություն ունի ձեռքի տակ, ինչ սեմինարների, քննարկումների, վերապատրաստումների է մասնակցել, ինչպես է կատարելագործվում, ինչ մանկավարժական նոր տեխնոլոգիաներ է իրագործում իր գործունեության ընթացքում: Լավագույն դեպքում 50-60-ական թվականներին կազմված հին, անճաշակ ժողովածուներ են, ֆիդայական կամ անհասկանալի ու անորակ, սարքովի երգեր, այն էլ՝ սեփական նախաձեռնությամբ այստեղ-այնտեղից ձարած: Վարիչներին դարձրել ենք տնտեսվար-վարչարարներ, որոնք համակերպվել են իրավիճակին՝ մոռանալով մանկավարժական լուրջ գործունեության, հետազոտական աշխատանքի, դաստիարակի զարգացման, կատարելագործման իրենց պարտականության մասին (թեև նրանցից շատերը բավականին ունակ, խելացի մարդիկ են): Հարցրեք վարիչներին՝ ինչ մանկավարժական գրականություն են կարդացել վերջին անգամ, էլ չենք խոսում մասնագիտական զարգացման նպատակով երբ են ինտերնետ մտել, նյութ հայթայթել իրենց և իրենց աշխատողների, սաների համար: Չինովնիկները սեփականաշնորհել են «դաշտը» և թելադրում են չկարդացողի, ոչինչ չանողի իրենց կամքը, մենք էլ ծնողով, դաստիարակով, վարիչով դարձել ենք նրանց կամակատարները: Գուցե սա է նրանց ինքնագոհության պատճառը. ես եմ որ կամ, մնացածներդ պիտի պարեք իմ դուրուկի տակ: Վայն եկել է տարել այն վարիչին, որ կփորձի ինքնուրույն ինչ-որ բան անել, ինչ-որ բան փոխել հանճարեղորեն չաշխատող համակարգում. գլխից ձեռ է քաշել լ:

Հիմա շատերը կքմծիծաղեն՝ ջուրն եկել է, ջաղացը տարել, սա չախչախի լացն է լացում: Մոռանում ենք, որ եթե այսպես շարունակվի, մենք էլի մնալու ենք նույն կոտրած տաշտակի առջև: Այսինքն՝ ի՞նչ, խեղճ, անազատ, կրավորական երեխան չի՞ անհանգստացնում, վախեցնում մեզ, շարունակում ենք խեղճերի հասարակություն

աճեցնել ու զարմանալ, թե ինչու մեզ չեն հարգում:

Երբ փորձում ես հասկանալ, պարզվում է, որ խնդիրն այնքան էլ ֆինանսը չէ. ցանկության հարց է (գուցե մի քիչ էլ համարձակության, չգիտեմ):

Որ ծնողը, հասարակությունը պատրաստ է կրթության համակարգային, բովանդակային լուրջ փոփոխությունների, ցույց է տալիս «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվող փորձը: Այստեղ արդեն 4 տարի է մշակվում և իրագործվում է նախադպրոցականի զարգացման հանրապետական ծրագիրը՝ «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում»: Ամեն ինչ սկսվել է զրոյից, հիմա կրթահամալիրի նախակրթարաններում գործում է ութ նախադպրոցական խումբ, սաների թիվը անընդհատ մեծանում է: Նախակրթարանների սաները մեր ծրագիրն ընտրած ծնողների երեխաներն են: Ծրագրին ծանոթ ծնողը ոչ միայն մեր պատվիրատուն է, այլև գործընկերն ու աջակիցը, և առանց նրա հետ համագործակցության դժվար է պատկերացնել մեր նախակրթարանները: Այսինքն՝ ծնողը նախընտրում է երեխայի ազատ գործունեությամբ բնական զարգացումը, պատրաստ է հրաժարվելու հնացած մեթոդներից, բայց չկա այն միջավայրը, որտեղ իր երեխան բազմազան գործունեության և դրա արդյունքում իրական զարգացման հնարավորություն կունենա:

Վստահ եմ, որ շատերն են մտահոգ, շատերն են այսպես մտածում: Դրանում համոզվեցի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում» ծրագրով իրականացվող վերապատրաստումների ժամանակ դաստիարակների և վարիչների հետ շփումների ընթացքում:

Խոսքս ավարտված չեմ համարում. գիտեմ, որ այս թեմայով շատերն ասելիք ու անելիք ունեն՝ սկսած ծնողից ու վարիչից մինչև թերթ ու հեռուստաընկերություն:

Հրավիրում եմ բաց քննարկման՝ ինչ է պետք նախակրթարանին (մանկապարտեզին) վաղվա ազատ, արժանապատիվ և արժանավայել քաղաքացի մեծացնելու համար: Քոլեջի «Նախադպրոցական ուսուցում» մասնագիտական կրթական ծրագրի նոր կազմակերպում

1-ին մաս

Նախաբանը հենց այնպես չգրվեց

Երկար փորփրեցի համացանցը, ԲՈՒՀ-երի կայքերը, այդպես էլ չկարողացա գտնել մոտավոր տեղեկություն իմանալ ուսուցչի, դաստիարակի որակավորում ստացող շրջանավարտ ուսանողների մասին: Միայն մանկավարժական համալսարանի կայքում գտա 2016-2017 ուստարում առաջին կուրս ընդունվածների թիվը 1180՝ չհաշված մարզային մասնաճյուղերը: Կարելի է ենթադրել, որ մոտավորապես այդքանն էլ ավարտում է: Կայքում ուսանողը չկար՝ իր մասնագիտական-փորձառական զարգացմամբ, կրթական խնդիրներով:

Ինչևէ: Դա գուցե այնքան կարևոր չլիներ, եթե համոզված լինեինք, որ նորավարտ մասնագետները պատշաճ կրթություն են ստացել, որ ապահովված են մասնագիտական աշխատատեղով: Չկա նման տեղեկատվություն: Բայց մենք գիտենք, չէ՞, որ քչերն են ճարում այդ աշխատանքը: Կրթությունն էլ իրական խումբ-դասարանից կտրված է և առանձնապես գործնական-փորձառական չէ: Ուսանողը ժամեր շարունակ դասախոսություն է լսում կրթության զարգացման, կրթական տեխնոլոգիաների,

առաջադեմ մեթոդների մասին՝ առանց դրանց իրագործումը տեսնելու, առանց դրանց իրականացմանը մասնակցելու: Հետո, երբ հայտնվում է դպրոցում կամ նախակրթարանում, անում է այն, ինչ կարողանում է, ինչ հիշում է իր դպրոցական կյանքից, ինչ անում են իր նոր գործընկերները: Եվ մենք վերարտադրում ենք մեզ: Անկախ ամեն ինչից՝ ժամանակներն ու տեխնոլոգիաները փոխվում են, բայց իրե՛նք պատրաստ չեն լինում այդ փոփոխություններին:

Պատճառաբանե՞մ...

Կրթահամալիրի քոլեջի ուսանողների բախտն իհարկե, բերել է, չես համեմատի այլոց հետ, բայց...

Նախորդ տարիներին ուսումնական 36-40 շաբաթներից ուսանողը խմբում կամ դասարանում լինում էր 17 շաբաթ, որից ընդամենը 4 շաբաթն էր լիարժեք, տեսական ուսուցումից կտրված: Ի՞նչ ասել է մանկավարժության տեսական ուսուցում՝ գործուն միջավայրից դուրս, դրանից անկախ:

Կրթահամալիրի կրթական տարածքները հարուստ են, բազմազան, հետաքրքիր, փորձառու դասվար-դաստիարակներ, կրթական ծրագրեր... Էլ ի՛նչ է պետք կրթությունը բազմակողմանի, փորձառական դարձնելու հանար: Մեկ է, մենք էլ մեր ունեցածն էինք թերի օգտագործում: Եվ արդյունքում, շրջանավարտի մասնագիտական հմտություններն ու կարողությունները թերի էին մնում: Դիպլոմային աշխատանքը չէր կապվում ամբողջական կրթության իրականացման հետ: Ուսանողը մշակում էր մի թեմա. լավ է, դրանք ավելի գործնական էին, իրականացվում էին խումբ-դասարաններում: Բայց, ինչքան էլ ուզես, նման աշխատանքը լիարժեք չի լինի, ո՛նց ես ամբողջից անջատում մասը և ուզում ամբողջական պատկերացում ներկայացնել:

Ծրագիրը

Ծրագրին մասնակցում է Քոլեջի «Նախադպրոցական կրթություն» բաժնի 15 ուսանող՝

- 8-ը՝ առկա ուսուցման խմբից
- 4-ը՝ հեռավար ուսուցման խմբից
- 3-ը՝ մեկամյա կրթության:

Ավարտող ուսանողներին նախորդ ուստարում էլ դասավանդել էմ... ու չի ստացվել այն, ինչ ուզել էմ՝ ազատ, անկաշկանդ, նախաձեռնող անհատ ու թիմ, ինքնուրույն, ինքնակազմակերպվող, նպատակային, գրագետ աշխատող՝ սովորող-ոգևորվող, սովորածը զարգացնող, նոր ու անսովոր, ստեղծական լուծումների ունակ, խաղացող-խաղացնող ու ճաշակով:

Կատարյալ կլիներ: Է, հա՛, բա մարդը կատարելության չի՞ ձգտում: Ո՛ր հասավ՝ հասավ. ամեն մեկն իր չափով: Փորձով են փորձ ձեռք բերում:

Ներառում

Իսկ չորս շաբաթում բոլորովին այլ միջավայրից եկած, կրթահամալիրի լսարան-դասարաններում դասացուցակով սովորած ուսանողն ի՛նչ փորձ պիտի ձեռք բերեր: Չեմ թերագնահատում, մանավանդ, որ հաճախ են մասնակցել կրթահամալիրյան անց ու դարձին, բայց՝ ո՛չ համակարգված, ո՛չ կենտրոնում, ո՛չ որպես հեղինակ-նախաձեռնող-համակարգող, ոչ դասվար-դաստիարակի գործընկեր:

Եվ այսպես...

Ուսանողները մասնակցեցին ծրագրի մշակմանը, առաջարկություններ արեցին: Նրանք լավ էլ գիտեին, իրենց ինչ է պետք:

Նոր կազմակերպմամբ նրանք խմբում լինում են ամեն օր՝ որպես ուսանող-դաստիարակ: Անվանումը պատահական չէ՝ ուսանող-դաստիարակ: Դիտող չէ, հետևող չէ, թելադրվող-կատարող չէ, դաստիարակ է, որ ակտիվ աշխատում է ավագ գործընկերոջ կողքին, նրա աջակցությամբ:

Մեկ-երկու շաբաթ սայլը տեղից չէր շարժվում: Ապրեն մեր դաստիարակները, սիրով, փորձով ներառեցին, այո՛, ներառեցին ուսանողներին: Գայանե Կարապետյանի նման լրակյացը դարձավ լավ հեքիաթասաց: Տաթև Ժամհարյանը աննկատ դարձավ [խմբի անդամ](#) և հրճվանքով, իր ֆիրմային քրքիջով սկսեց պատմել սաների «տարօրինակությունների» մասին, Միհրանյան Շուշոն ու Օլյան համարյա ընկերացան... Գեղարվեստում թիմ [ստեղծվեց կամ առաջացավ](#). երաժիշտ Հասմիկ Մաթևոսյանը Շուշոյին խաղացրեց... Պատումների շարք առաջացավ՝ «Ներկայացնում է [ուսանող-դաստիարակը](#)»:

Անհատական կրթության մի տարբերակ, որի արդյունքում զարգանում են սովորողի անհատական որակները, հաղթահարվում են բարդույթները: Ամանորյա ծեսին նախապատրաստվելիս աղջիկներից մեկը կուրսի մասին ասաց՝ մենք հիմա կուրսով թիմ ենք: Մյուսն ավելացրեց՝ կուրսով չէ, բոլոր դաստիարակներով, նկատի ունե՞ր նաև իրենց ավագ գործընկերներին:

Մա կարևոր է՝ ներառվող, թիմով աշխատելու ունակ դաստիարակ:

Այս ճանապարհին ուսանողները դարձան ավելի [ազատ-անքոնագրոս](#), (այսպիսի թերապիա), ավելի պատասխանատու-պարտաճանաչ: Ինչպես են այս խնդիրները լուծում այլք, և կարևորո՞ւմ են դրանք մանկավարժական կրթություն իրականացնողները: Հո դեկլարացիա-լոգունգներով, տնական խրատներով կամ պարտադրանքով չէ...

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ: ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՎ

Որքան ուզում ես՝ ասա, որ ուրիշի արածը կրկնելը, ուրիշի թնի տակ ապրելը լավ բան չէ, մեկ է, մարդը հեշտին է վազում: Հավաքվում էինք, քննարկում հաջորդ շաբաթվա անելիքները, նայում էինք ամսվա օրացույցը... Էս աղջիկներն էլի նախագիծ չէին կազմում. լավագույն դեպքում գործընկեր-դաստիարակի նախագիծն էին տեղադրում բլոգներում: Որքան ակտիվանում էր նրանց գործունեությունը, ավելի ինքնավստահ էին դառնում, հաճախ էինք անդրադառնում անելիքին, օրվա կազմակերպմանը, այնքան նախագիծ ասվածի անհրաժեշտությունն ակնհայտ էր դառնում: Հիմա ուսանողների գործունեության ծավալը մեծացել է, գործունեության տեսակները շատացել: Օրը ճիշտ կազմակերպելու, ժամանակը դասավորելու, անելիքը հստակեցնելու համար նախագիծն անհրաժեշտություն է դարձել: Չեմ ասի՝ բոլորն են նախագիծ տեղադրում բլոգում. 2-3 հոգի դեռ գլուխ է պահում: Հավատացած եմ, որ այդ կուլտուրան, բոլորի գործիքը կդառնա շուտով: Տեսեք [Աղավալու](#), [Նազենիի](#), [Տաթևի](#), [Աստղիկի](#) օրինակը:

Սեպտեմբերից հունվար ուսանողներն անմիջականորեն մասնակցեցին նախակրթարաններում, կրթահամալիրում իրականացվող ստուգատեսներին, տոներին, ծեսերին ([Թթուղրիկ](#), [Դեկտեմբերիկ](#)):

Առաջին ինքնուրույն նախագիծը, սկսեցին «[Աղվես](#)» [երգով](#): Պարզապես սովորում էին [Տաթև Ստեփանյանի հետ](#): Երրորդ օրն այնպես ստացվեց, որ միացան նաև Նոր դպրոցի 5-րդ դասարանցիները: Դե, խաղի տուտը բացվեց, ինչպես ժողովուրդն է ասում:

[Գեղարվեստ](#), [տեխնոլոգիա](#). [Աղվեսը՝ փազ](#): Աղվեսը եղավ նախակրթարանի բոլոր խմբերում, անգամ 5 տարեկանների տոնին... Առաջին ինքնուրույն փորձը, առաջին ոգևորությունը: Նախաձեռնեցին, մշակեցին և իրականացրին [«Աղվեսագիրք»](#), [«Ճնճուղ»](#), [«Ամանոթյա խաղեր»](#), [«Հունվարիկ»](#) «Ձմեռային պարտեզ»:
Չայնագրման է պատրաստ «Ճնճիկներ» երգ-խաղը, որն առաջին անգամ է երգվում կրթահամալիրում:

Կամաց-կամաց նախագծերն ավելի հետաքրքիր, ամբողջական են դառնում, ավելի համարձակ: Ավելի մասնագիտական: Փորձի քսակը քիչ-քիչ լցվում է ինքնավստահությամբ, ներքին արգելքի հաղթահարումով:

Հավելված

- [Օրագրի ներկայացումը 2017թ. հունվարյան գիտագործնական հավաքի կտր սեղանին](#):

ԶՐՈՒՅՑ 2-4 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ 2-4 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պըղը-պըղը-պղպջակ

Ի՞նչ հրաշք են օճառի պղպջակները, հրավառության նման տոնական ու զվարճալի: Փոքրիկին մի անգամ սովորեցրեք պղպջակներ ստանալ, ու նրա համար անվերջանալի մի հեքիաթ կսկսվի: Շատ բան պետք չէ՝ փոքրիկ տաշտ, օճառ, ջուր ու հյութ խմելու ձողիկներ: Դրա համար առանձին հարմարանք-խաղալիք էլ կա, կարող եք գնել, թեև՝ ավելի լավ է միասին պատրաստեք, բարդ բան չէ: Գունավոր հոտավետ հեղուկ օճառները՝ լիքը, ընտրի՛ր որն ուզում ես: Պատկերացնո՞ւմ եք՝ այդ հրաշքով տարված փոքրիկը ինչպես կնկարի իր «սարքած» հեքիաթային պղպջակը: Միայն թե մենք չխանգարենք, մենակ թողնենք նրան իր պղպջակների հետ: Կասեք՝ հա՛, ի՞նչ: Այն, որ պղպջակներով խաղալիս փոքրիկի կյանքը մի հրաշքով, մի գույնով էլ կավելանա, աշխարհն ավելի հարուստ կդառնա, փոքրիկը ինֆորմացիա (մեծերի սիրած արտահայտությունը) ձեռք կբերի, որն հետո գիտելիք է դառնալու: Երկու-երեք տարեկանն իրեն հրաշագործ է զգալու:

Գունավոր ջրերն էլ աննկարագրելի գունավոր հրճվանք են՝ կարմիր, դեղին, մանուշակագույն, ինչ գույն ուզես: Բավական է փոքրիկների հետ թափանցիկ բաժակում կարմիր կամ այլ գույնի ջուր ստանալ, ու նրանց թողնել ներկերի ու բաժակների հետ: Ոչինչ, որ կներկոտվեն, ինչ անենք: Թող սովորեն ներկոտվելուց հետո լվացվել-մաքրվել կամ չներկոտվել:

Մեր մեջ ասած՝ ներկոտ թաթիկներով ու մոլորներով նրանք շատ անուշ են:

Տաշտակի մեջ կարմիր կամ մանուշակագույն ծով կստանաք, որի վրա ինչ գույնի նավ ուզի, կլողա. միայն պետք է տաշտակը մի՞ քիչ շարժել, որ ալիքների վրա նավը «պարի»: Բա ո՞նց, մեր նավերն էլ են պարող, գունավոր ութոտնուկներն էլ:

Երկուտոտնուկից (դա մենք ենք ու մյուս երկուտոտնուկները) ութոտնուկ. համ էլ կհաշվենք: Կարևորը հաշվելու բան լինի:

Պղպջակից տեսեք ուր հասանք: Է, պղպջակներն էլ կարելի է հաշվել, ափսոս շատ են սիրուն, իսկ սիրուն բաները հաշվվել չեն սիրում, հենց սկսում ես հաշվել, անհետանում են:

Թուղթը, ներկն ու ջուրը

Լողափին նկարի ինչքան ուզում ես, ինչով ուզում ես, ինչպես ուզում ես, ինչ ուզում ես: Դուրս է գալիս, որ լողափին ամեն ինչ ուզելով է Էս ի՞նչ լավ է: Պատճառը ջուրն է, ջրի տված հրճվալի ազատությունը, որ մտնում է մեջդ ու թներ տալիս քեզ, որ լողաս ազատության մեջ:

Ամառային սպունգանկար

Ի՞նչ ասես չես անի գուաշով, ջրով, թղթով, վրձինով... ու փոքրիկ սպունգով: Գուցե գույներով թաթախված սպունգներն ավելի կախարդակա՞ն են: Դրանցով ինչ ուզես կնկարես՝ ծիծաղ ու լաց, հեքիաթ ու քամի...

Ախր էս սպունգն էլ է հետաքրքիր: Ամեն ինչ վերցնում է ու տալիս: Ուզում ես վրան նկարել՝ խնդրեմ: Շա՞տ զարմանալի, խառնաշփոթ բան է էս սպունգանկարը:

Ուզում ես իրենով նկարել՝ էլի խնդրեմ: Մի՞ քիչ ջրիկ ներկը լցնում ես իր վրա և իրենով նկարում թղթին: Դե միտք, արի ու հասի նկարի ետևից: Բառերը հաստատ քիչ են ու քիչ: Այսպես էլ կարող ենք անել՝ թղթի մի կեսը գունեղով ենք լցնում (ներկերի մեջ ջուրը մի քիչ շատ ենք անում), թուղթը ծալում ենք: Տեսնես՝ ի՞նչ կստացվի: Փորձեք միասին:

Փոքրիկի ձեռքը սպիտակ թուղթ տվեք և առաջարկեք այն ընկղմել որևէ գույնով «թանձր ներկված» ջրի մեջ, հետո թուղթը միասին կախեք չորանալու կամ ինքներդ արեք դա՝ շարժելով փոքրիկի հետաքրքրությունը: Հաջորդ օրը ինքը ինքնուրույն կանի այդ գործողությունը, եթե գունավոր ջրերն ու թուղթը իրենց տեղերում լինեն: Կիսգրգի, թուղթը վրձինով կներկի, էլ ինչ կանի՝ իր գործն է:

Խաղացեք փոքրիկի հետ գույներով և նրանց հետ զրուցեք երազների մասին:

Շատախոսող գլաքարեր կամ գլաքարային թատրոն...

Սա էլ մի ուրիշ հրաշք է: Քարը կարող են լեզու բերան առնել, եթե սիրես նրան, գույն տաս: Գլաքարերը մարդ են դառնում, օձ կամ մողես, ծաղիկ կամ ծիս: Պազվում է՝ գլաքարերը սիլիկոնե սոսնձով լավ էլ կպչում են իրար: Երևակայությունդ գործի դիր ու ի՞նչ ուզում ես՝ պատրաստիր: Թատրոն խաղա՝ սկսած տիկնիկ սարքելուց մինչև մտքիդ ու արածդ գործի ներկայացում դառնալը: Քարն ու դու մի լա՛վ չաչանակեք, բլբլացեք, ինչքան սրտներդ կուզի: Շարիրգլաքարային տիկնիկներդ շարի՛ր մի տեղ: Էս էլ քեզ՝ գլաքարային թատրոն: Ամռան շոգին ինչի են պետք ծանր ու մեծ տիկնիկները: Քարերը պակաս տիկնիկ են դառնո՞ւմ, մանավանդ որ դրանցից ոչ խանութում կա, ոչ էլ, ցավոք սրտի, տիկնիկային թատրոնում:

Ո՞վ է տեսել Արևիկի քար-տիկնիկը: Այ գործ:
Մյուս քարերն էլ պակաս չեն, ասեմ՝ իմացեք

2005թ. «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏՍԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՄՇԱԿՎՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՎՈՒՄ Է «ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ՆՐԱ «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉԸ

Մանկան թատրոն

«Առողջ երևակայությունը ոչ թե անիրականի հետ գործ ունի, այլ պատկերացման հարուցած մտավոր իրացումների: Դրա աշխատանքը փախուստ չէ դեպի երազանք ու իդեալ. դա իրականի տարածման ու իրագործման մեթոդ է»: Ջ. Դյուի

Նպատակը՝ երեխայի զարգացումը

Խնդիրները՝

երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում
խոսքի զարգացում
անհատականության դրսևորում
ինքնադրսևորում
ինքնարատահայտում
ինքնակազմակերպում
նախաձեռնելու, ակիվ գործելու մղումների ակտիվացում
սոցիալական հարաբերությունների զարգացում
կերպավորման, կերպարանափոխության հմտությունների զարգացում
խմբովի գ անելու կարողության զարգացում
խմբով աշխատելու կարողության զարգացում
վերլուծելու, համադրելու ունակության ձեռքբերում
գեղարվեստական մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացում
միմիկայի զարգացում

*«... Երեխաները հանպատրաստից պիեսներ են հորինում, անհրաժեշտ մինիմում բեմական միջոցներն իրենց ձեռքով պատրաստում, որպես դերասաններ հանդես գալիս՝ տրված թեմայով իմպրովիզացիա են անում, հանդիսատեսներին ներկայացման մեջ ներքաշում: Եվ այս ամենը՝ «անկրկնելիության» նշանի տակ. այստեղ թատրոնը «կյանքի պահ» է, ոչ թե «ապրածի վերարտադրությունը: Անձամբ ինձ համար «Թատրոն-Խաղ-Կյանք» սկզբունքը շատ ընդունելի է: Դա հորինող երեխային կօգնեք ընդլայնելու իր մտահորիզոնը: Առաջին իմպրովիզացիաներից հետո, որպեսզի խաղը չսատշի, այն պետք է ինչ-որ բանով հագեցնել, հարստացնել: Ազատությունը «տեխնիկայի» աջակցության կարիքն ունի»: **Ջ.Ռոդարի***

Թատրոնը երեխայի կյանքին միախառնված մեծ խաղ է: Այդ խաղը պայմանականորեն կարելի է երկու մասի բաժանել՝ խաղարկային իրավիճակ (դերային խաղեր) և ներկայացում՝ խաղ-աշխատանքի ընթացքում ծնված սցենարով: Խաղարկային իրավիճակների վերարտադրումը «տունտունիկ» խաղի նման է, դերային խաղ՝ երեխային լավ ծանոթ, ապրված իրավիճակներով և հարաբերություններով: Ամեն մեկն իր դերն է ընտրում ու խաղում: Նա միաժամանակ սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում հասակակիցների հետ, վերարտադրում հասարակության մեջ գործող սոցիալական հարաբերությունները, հասարակության մեջ ընդունված օրենքները, ապրում այդ օրենքներով: Առաջին հայացքից թվում է, թե նա ընդամենը պասիվ ընդօրինակող է: Իրականում նա նոր տարրեր է ներմուծում, այլ կերպ է մեկնաբանում իրավիճակն ու հարաբերությունները, նոր երանգ է ներմուծում սովորական առօրյան վերարտադրող իրավիճակի մեջ՝ ելնելով իր կենսափորձից, աշխարհընկալումից: Նրա համար այդ խաղը ոչ թե նմանակում է, այլ կյանքի պահ:

Դրա արդյունքը փոքրիկ էտյուդներն են:

«Նմանակումն այն միջոցներից մեկն է, որոնցով մեծահասակների գործունեությունն ազդակ է դառնում, այնքան հետաքրքիր, բազմազան, նոր, որ մտքի արագ առաջընթացի ծայր է տալիս: Մակայն միայն նմանակումը

մտածողությունը չէր խթանի, եթե պարզապես ուրիշների արտաքին արարքները թուրքականների պես պատճենելով սովորեինք»։ Ջ. Ղյուի

Խաղարկային իրավիճակները կարող են նաև քիչ կապ ունենալ կամ ընդհանրապես կապ չունենալ առօրյայի, կենցաղի հետ, դրանց ստեղծողը երեխայի երևակայությունն է, այս դեպքերում նրա մտածողությունն ավելի ազատ է, անկաշկանդ:

Դերային խաղն ապահովում է արդյունավետ հաղորդակցություն, զարգացնում է ընդհանրության զգացումը, ուշադրությունը, սովորեցնում է ճիշտ արտահայտել մտքերը, կառուցել երկխոսություններ, զարգացնում է խոսքը: Երեխան սովորում է արտահայտել զգացումները, ձգտումները, սովորում է ենթարկել իր գործողությունները խաղի կանոններին, սովորում է նպատակաուղղված լինել:

Դերային խաղերը հաճախ խաղում են ազատ խաղերի ժամանակ, դրանք սովորաբար մեծերի կյանքի մանկական մեկնաբանություններ են, որոնցում արտահայտվում է փոքրերի վերաբերմունքը մեծերի «խաղի» նկատմամբ:

Դերային խաղեր կազմակերպում է նաև դաստիարակը, ինքն էլ խաղում է երեխաների հետ: Դրանք կարող են հստակ խնդիրներով փոքրիկ խաղ-ներկայացումներ լինել:

Երեխաների մի խումբը ընկերների համար խաղում է, մյուս խումբը հանդիսատես է դառնում: Հետո դերերը փոխվում են: Թատրոնում (հատկապես մանկական թատրոնում) հանդիսատեսը նույնքան կարևոր է, որքան դերասանը: Նա աստիճանաբար, աննկատ ներքաշվում է խաղի մեջ, իր վերաբերմունքով, միջամտություններով ազդում է ընթացքի վրա: Նա միաժամանակ նախանշում է իր անելիքը՝ հաշվի առնելով ընկերների «բացթողումները», իր աշխարհայացքը, իր դիտարկումները: Դաստիարակվում է կիրթ, դիտարկող, մտածող հանդիսատես, որը կարողանում է գնահատել, վերաբերմունք արտահայտել, հետևություններ անել, ներկայացման մասնակիցը դառնալ: Միշտ կարելի է հանպատրաստից բեմ սարքել և «թատրոն-թատրոն» խաղալ, ինչպես մեծերն են անում:

Խաղարկային իրավիճակներ

- Տունտունիկ
- Բժիշկ-բժիշկ
- Դպրոց-դպրոց
- Խանութ-խանութ

Ես

Այս խաղով երեխան իրեն է ներկայացնում տարբեր իրավիճակներում, տարբեր տրամադրությամբ, նա պատմում է և ցուցադրում.

- Երբ բարկացած եմ...
- Երբ ուրախ եմ...
- Երբ տխուր եմ...
- Երեկ ես...
- Այսօր առավոտյան ես...

Երեխան ինքն է ստեղծում իրավիճակներ և խաղում, դաստիարակը երբեմն հուշող,

կազմակերպող, աջակից, խաղակից, երբեմն էլ կազմակերպող է դառնում:

Էտյուդ ըստ առաջադրված իրավիճակի

- Կորած իրի փնտրտուք
- «Առևտուր»

Հանդիպումների խաղ

Հանդիպում են

- հարազատները (հորաքույրեր, քեռիներ...)
- վաղուց իրար չտեսած ընկերները
- ծանոթ հեքիաթների հերոսներ
- բնության երևույթներ (անձրևն ու քամին, ցուրտն ու ամառը...)
- հասկացություններ (ուրախն ու չարությունը, կատակն ու կռիվը, ձայնն ու լռությունը, բարևն ու արևը...)

Հյուր (այցելություն) ...-ին

- դերձակին
- վարսավիրին
- բժշկին...
- հեքիաթի հերոսին

Ա՛յ քեզ օր...

Միասին որոշում են այդ օրվա գույնը, անունը, պտրաստում են օրվա «նշանը». դա կարող է գլխարկ լինել, թիկնոց, վզկապ, ակնոց կամ որևէ այլ բան:

- Ծաղիկների օր
- Տիկնիկների օր
- Արևի օր
- Որևէ գույնի օր (Նախօրոք կպայմանավորվեն այդ օրը օրվա գույնի շորեր հագնել, այդ օրը կնկարեն միայն այդ գույնով, ամեն մեկը կդառնա այդ գույնի որևէ բան և օրը կանցկացնի այդ դերում)
- Հաճոյախոսությունների օր
- Ուրախ ու տխուր օր
- Տատիկների-պապիկների օր
- Կոշիկները (շորերը) թարս հագնելու օր
- Ջարմանալու օր

Օրվա ընթացքում կարող են մեկ-երկու էտյուդ խաղալ, մնացած ողջ օրը երեխաները իրենք կկազմակերպեն իրենց խաղերը և կխաղան՝ ինչ ուզում են: Օրվա նշանը, որը չեն հանի մինչև օրվա վերջ, նրանց կհիշեցնի օրվա «խորհուրդը»:

«Եթե իրոք»-ի ներազդման ուժի գաղտնիքը նաև այն է, որ չի խոսում իրական փաստի մասին, այն մասին, ինչ կա, այլ միայն այն մասին, ինչը կարող է լինել...

«Եթե իրոք»... Այս խոսքը ոչինչ չի հաստատում: Նա միայն ենթադրում է, առաջադրում լուծման սպասող հարցեր»: Ստանիսլավսկի

Ռոդարիական «Ինչ կլինեք, եթե...» մեթոդը թատերախաղի միջոցով անսահման հնարավորություն է տալիս երեխայի երևակայությանը. խաղն ակտիվացնում է միտքը, մղում ակտիվ գործողությունների, հորինելու, ստեղծագործելու:

Ինչ կլինեք, եթե...

- մոխրամանը գորտ լինեք, իսկ ձեռնոցը՝ մուկ (Ստանիսլավսկու օրինակը).
- բաժակը արջ լինեք, իսկ պայուսակը՝ փիղ.
- դռան ետևում կախարդ կանգնած լինեք:

Ես ... եմ, դու... ես

- Ես վերարկու եմ, դու՝ գլխարկ:
- Ես կոշիկ եմ, դու՝ ձեռնոց:
- Ես կապիկ եմ, դու՝ գնդակ:
- Ես ծաղիկ եմ, դու՝ փուշ:
- Ես օճառ եմ, դու՝ ձեռք:

Ռոդարիական հնարքների կիրառումը թատերախաղի միջոցով ոչ միայն ավելի հետաքրքիր ու արդյունավետ կդարձնի դրանք, այլև ավելի կընդարձակվեն երեխայի երևակայության սահմանները, խաղի ընթացքում նոր, անսպասելի լուծումներ կծնվեն: Թատերական խնդիրը ավելի գրավիչ կդարձնի նյութը և «աշխատանքը» այդ նյութով (տե՛ս Բանավոր խոսքի մշակում):

Մնջախաղ

Առանց բառերի՝ մնջախաղով կարելի ցուցադրել, խաղալ ամեն ինչ: Մնջախաղ կարող են խաղալ խոհանոցում, ծեսերի ժամանակ, այգում աշխատելիս. ամենուր, ցանկացած գործունեության ժամանակ, եթե դաստիարակը կարևորում է գործունեության այդ ձևը և երեխաներին աննկատ տանում է դրան:

Մնջախաղի ժամանակ երեխան

- ավելի է կենտրոնանում,
- փորձում ավելի լավ հասկանալ այն, ինչ պիտի ցուցադրի,
- աշխատում է տիրապետել իր մարմնին,
- աշխատում է իմաստավորել իր շարժումները,
- միացնում-նույնացնում է բառն ու շարժումը:

Մնջախաղը յուրօրինակ մտածողություն է ձևավորում, նպաստում է ստեղծագործական երևակայության զարգացմանը, մարմինն ավելի ճկուն դարձնում, զարգացնում է միմիկան, երեխայի մկանային համակարգը:

Բոլոր երեխաներն էլ հայրիկի ու մայրիկի կոշիկները հագնել սիրում են, որ նրանց պես լինեն, որ ավելի բարձրահասակ լինեն, որ պարզապես ուրիշ լինեն:

Վերազգեստավորման խաղը բացի իր խորհրդանշականությունից, դրանից բխող գրոտեսկային էֆեկտի շնորհիվ միշտ զվարճալի է: Մա թատրոն է. հետաքրքիր է ուրիշի զգեստներ հագնելը, ինչ-որ դեր խաղալը, ոչ քո կյանքով ապրելը, օտար շարժումներ կրկնելը: Ջ. Ռոդարի

Հանդերձարանը թատրոն-խաղարան կդառնա, եթե առանձին կախիչից կախված լինեն երեխաների ծնողների հին հագուստները, փողկապները, հատակին շարված լինեն նրանց հին կոշիկներն ու հողաթափերը, արկղով դրված լինեն ձեռնոցներ, թաշկինակներ, գլխաշորեր, գլխարկներ... Ամեն ինչ պիտի նախապես ախտահանված լինի: Երեխան կուզի մեծի հագուստով խաղալ, կհագնի իր ուզած շորը, կկերպարանափոխվի, կխաղա իր ծնողների դերերը, այլ խաղեր ու ներկայացումներ կկազմակերպի: Ծնողների հագուստները, կոշիկները հագնելը ոչ միայն բավարարում է երեխաների շատ ձգտումներ (հաճախ անիրականանալի թվացող), այլև ակտիվացնում է նրանց երևակայությունը:

Հանդերձարանում իրար կողք շարված կոշիկները կարող են կոշիկի թատրոն դառնալ:

Խաղ հայելու առջև

Հայելին խաղի, ներկայացման, ինքնաճանաչման անփոխարինելի միջոց է: Հայելու դեմ երեխան կգրուցի ինքն իր հետ, հեքիաթ կպատմի ինքն իրեն, կարող է ներկայացում խաղալ՝ երկու դերասանով՝ ինքն ու ինքը: Հայելու մոտ նա սիրով խաղում է նաև ընկերների հետ: Կարելի է օգտագործել նաև հայելու էֆեկտը՝ ամեն ինչ հակառակ հեքիաթի գործողությունները թարս պատմել, ծտի փոխարեն նանի ոտը փուշ մտնի, թագավորը ոսկի գտնի, աքլորը հափշտակի նրա գտած ոսկին...

Տիկնիկային թատրոն

«Երբ իրերը նշաններ են դառնում, երբ դրանք ուրիշ իրեր ներկայացնելու, նշանակելու հատկություն են ձեռք բերում, խաղը ֆիզիկական ուժերի պարզ ավելցուկից մտավոր գործոնը ներառող գործունեություն է դառնում»: Ջ. Դյուի

Նախ երեխան ու դաստիարակը պիտի ունենան հենց իրենց անունով իրենց ներկայացնող տիկնիկներ: Տիկնիկ դաստիարակն ավելի ընկալելի է և խաղարկային:

Տիկնիկը կախարդական գորություն ունի, նա խոսեցնում է նույնիսկ ամենալռակյաց երեխային, բազմաթիվ խաղային իրավիճակներ է հուշում, գործողությունների մղում: Տիկնիկային ներկայացումն էլ սոսկ սցենարի ներկայացում չէ:

Երեխան խաղում է իր պատրաստած տիկնիկով:

Այս կամ այն հերոսի տիկնիկը պատրաստելիս նա փորձում է պատկերացնել այդ հերոսի արտաքինը, նկարում է նրան, նրա հագուստը: Դեկորները պատրաստելիս վերարտադրում է այն միջավայրը, որում պատկերացնում է այդ հերոսին: Չարգանում է նրա պատկերային մտածողությունը:

Ամեն ինչ կարող է կերպար, խաղի առարկա, տիկնիկ դառնալ՝ երեխայի ձեռքը, ակնոցը, ավելը, գրիչը, փուչիկը, խոհանոցում մրգերից, բանջարեղենից պատրաստած կերպարները... Մի փոքր երևակայություն, մի քիչ աշխատանք՝ ու կարող է հետաքրքիր ու զարմանալի ներկայացում կամ խաղ ստացվել: Ձեռքը կկենդանանա, եթե նրան աչք-ունք նկարես, ավելը չարաճճի աղջիկ կդառնա, եթե նրա «մազերին» ժապավեն կապես...

Երեխան տիկնիկային ներկայացում կարող է խաղալ նաև սեղանին, արկղում լցված փոքրիկ ավազե հարթակի վրա (տե՛ս Ծրագրի իրագործման միջավայրը): Իսկ ամաչկոտ, անհամարձակ երեխաների համար շիրման իսկական փրկություն է. այն նրանց թաքցնում է իրենց հետևող բազում հետաքրքրասեր աչքերից, և նրանք ավելի համարձակ ու նախաձեռնող են դառնում՝ հաղթահարելով բարդույթները:

Փոքրիկ ներկայացման նյութ կարող են դառնալ առած-ասացվածքները, հատկապես նրանք, որոնց մեջ խաղ կա: Նյութը սեղմ է, ասելիքը՝ հստակ. այս դեպքում երեխաները կփորձեն արտահայտվելու, խաղը հստակեցնելու տարբեր լուծումներ փնտրել, կաշխատեն այնպես անել, որ խաղը հետաքրքիր լինի, ասելիքը՝ հասկանալի: Ծեսերը, տոները վառ ու գունագեղ ներկայացումներ են դառնում (տե՛ս «Ծիսարան» ժողովածուն):

Երգերի բեմադրում

Երգերի բեմադրումը երգի ուսուցման յուրօրինակ ներկայացում է:

Երգը լսում են, քննարկում բովանդակությունը՝ ինչի մասին է, ով կամ ովքեր կան երգում, ինչպիսին են նրանք, ինչ են անում, ինչպես են անում, կամ երգի այս կամ այն հատվածը ինչպես կարելի է ներկայացնել: Մաս-մաս խաղալով՝ սովորում են երգը: Հետո, տարբեր երգեր միացնելով, ամբողջական ներկայացում կստանան: Արդյունքում մանկական փոքրիկ օպերա կստացվի:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Իմացումի հրճվանք» ծրագրի կազմակերպումը

Երբևէ փորձե՞լ եք դասի կազմակերպումը, ուսումնական գործունեության ընտրությունը թողնել սովորողներին: Կամ՝ ինչ-որ գործունեություն նախատեսելուց առաջ հարցրե՞լ եք ձեր սաներին, թե այդ պահին նրանք ինչով կուզեին զբաղվել: Երբևէ հետևե՞լ եք այն սովորողի աշխատանքին, որը հանգամանքների բերումով առանձնացել է և զբաղվել իր ուզածով. այդ պահին նրան խանգարելը, միջամտելը անիմաստ է. գուցե միայն թույլ տա կողքից դիտել կա մ միանալ իրեն:

Եթե այդ պահին նրան լրացուցիչ տեղեկություն-նյութ պետք լինի, նա անպայման կգտնի հնարավոր բոլոր միջոցներով:

Կարո՞ղ եք ուսումնական պարապմունքն այնպես կազմակերպել, որ սովորողներն այդքան կենտրոնացած, կլանված, նպատակային աշխատեն: Կասկածում եմ: Այնինչ՝ հեշտ է դառնալ սովորողի սովորող գործընկերը, միանալ նրան կամ նրա կողքին առանձին աշխատել, նրա նման անել այն, ինչն այդ պահին քեզ շատ է պետք կամ հետաքրքիր: Ժամանակն ու հավեսն էլ ոչ մի տեղ չեն փախչի: Այլ միջոց չկա: Եթե դասավանդողը չի աշխատում սովորողի հետ, կենտրոնում ուսուցանող է, ուրեմն նա հակացուցված է սովորողի համար:

Կրթությունը համատեղ հետազոտական, ստեղծագործական աշխատանք է, որ համատեղ կատարում են սովորող ուսուցիչն ու սովորող աշակերտը: Այդ աշխատանքը սերտորեն կապված է նրանց իրական կյանքի հետ, ոչինչ արհեստական, հորինված ու ինքնանպատակ չէ այդ գործընթացում: Սովորողը իր ուսուցչի հետ դառնում է աշխատանքի կազմակերպիչ ու կատարող: Նա ազատ է գործունեության ընտրության հարցում. զարգացվում են ինքնուրույն գործունեությամբ զբաղվելու ունակությունները: Ուսումնական պարապմունքի թեմայի շրջանակում մի խումբը կարող է համակարգչով աշխատել, մի խումբը՝ նկարել, մի այլ խումբ՝ ձայնագրելով նյութ ձայնագրել:

Եթե աշխատանքը երեխայի բնույթին և հետաքրքրություններին համապատասխան է, ապա նա կարող է դրանով լուրջ և կենտրոնացած զբաղվել: Կենտրոնացած աշխատանքային վիճակ. եթե անհատը կամ խումբը ինքնաբերաբար այդ վիճակում չի հայտնվում, ապա շատ դժվար է այն պարտադրելը: Ակտիվ աշխատախմբի պայմաններում սովորողների համար ստեղծվում են անհատապես աշխատելու հնարավորություններ: Ընդհանուր հետաքրքրություններով միասնական կամ անհատական գործունեության ընթացքում դրսևորվում են սաների կարողություններն ու անձնային որակները:

Ուրեմն՝ համապատասխան զարգացնող միջավայրում սովորող աշակերտի և սովորող ուսուցչի համատեղ գործունեություն, գործունեության բազմաձևության ապահովում և գործունեության ընտրության ազատություն:

Ազատ ընտրություն կատարող մարդը չի կարող կրկնող, ուրիշի ասածը անգիր անող լինել: Նա անպայման ստեղծող ու ստեղծագործող է, պրպտող, հետազոտող: Դպրոցի խնդիրը սովորողին դրա հնարավորության ընձեռումն է՝ կրթության և միջավայրի կազմակերպմամբ: Մաթեմատիկա կլինի, օտար լեզու...թե բնագիտություն, կդառնան անգիր արվող անկենդան միավորների հավաքածուներ, ոչ միայն անհետաքրքիր կլինեն ու անարդյունավետ, այլև մտքից գուրկ ու վնասակար:

Առանց ստեղծելու և ստեղծագործելու ուսուցումը կդառնա պարագիտիկ, երեխան էլ՝ պարագիտ, ուրիշի ստեղծածը յուրացնող: Ստեղծագործելով են կատարվում հայտնագործությունները: Երեխայի բնույթը ստեղծական է, որտեղ ղ թաքցնի իր մտքերը, եթե մենք զրկենք դրանք արտահայտելու և իրականացնելու հնարավորությունից: Նա ուզում է անընդհատ հորինել, փնտրել, խնդիրն այլ կերպ լուծել, անգամ ծաղիկն այլ կերպ մշակել: Ճանապարհներից հարմարն ընտրելը, տարածություն յուրացնելը և նման սովորական թվացող գործողությունները ստեղծական միտք են պահանջում: Մեր գործը նրան փականքների մեջ չդնելն է ու նրա հետ անվերջ ստեղծագործելը:

Յուրաքանչյուր գործունեության հիմքում սովորողների ստեղծական և ինքնուրույն որոնողական կարողությունների բացահայտումն ու խթանումն է: Դասավանդողի թելադրանքով և պարտադրանքով անգիր անելու փոխարեն սովորողը զբաղվում է ստեղծական-ստեղծագործական աշխատանքով՝ անընդհատ կիրառելով, կատարելագործելով և հարստացնելով ձեռք բերած հմտություններն ու գիտելիքները:

Ուրեմն՝ գործունեության առաջին տեղում ստեղծագործելն է:

Ասում են՝ դժվարը սկիզբն է: Այդպես չէ: Դժվարը որոշում կայացնելն է և դասատուի դերից հրաժարվելը: Մնացածը գործընկերային հարաբերություններ են, որտեղ

որոշումներ կայացնողը, հետևաբար՝ պատասխանատուն միայն դու չես կամ ոչ միայն դու ես: Ազատ, անկաշկանդ մթնոլորտում ուսուցիչը դադարում է թելադրող լինելուց, նա իր սաների գործունեության կազմակերպիչն ու մասնակիցն է, խորհրդատուն, հմտություններ փոխանցողը: Նաև նրանից սովորողը, որովհետև այդ տարիքում նրանք մեզ՝ մեծահասակներիս շատ բան ունեն փոխանցելու՝ սկսած տեխնիկական հմտություններից, որ երբեմն մենք չենք հասցնում ձեռք բերել, վերջացրած մեր կորցրած մանկությունով:

Դասավանդողի, ծնողի, սովորողի պարզ գործընկերային հարաբերությունների շնորհիվ դասարանը դառնում է միասնական հավաքանի, որը պատասխանատու է իր կյանքի որակի համար, որտեղ հարգվում են բոլորի իրավունքները և բոլորը կատարում են իրենց պարտականությունները:

Ուրեմն՝ ուսուցման կազմակերպում փոխադարձ հարգանքի և արժանապատիվ միջավայրում:

Ուսուցումը դադարում է նույնացվել դասարանային դասի հետ: Դու հո չե՞ս կարող հետաքրքրասեր երեխային արգելել հաշվել բակի սյուները, կարդալ ցուցանակները, գնումներ կատարել, մասնակցել ընտանեկան ծախսերի հաշվարկումներին, պապի հետ ծառ տնկել ու մշակել՝ հետևելով պապի խորհուրդներին, լսելով նրա պատմությունները ... Այս շարքն անվերջ է: Իր շրջապատի, միջավայրի նկատմամբ ուշադիր, դիտարկող, գննող, ուսումնասիրող, այդ միջավայրը հարստացնող, իր հետաքրքրությունները բավարարող, իր հարցերի պատասխանները փնտրող սովորողի համար կրթվելը անընդհատ գործընթաց է դառնում, նրա ամենօրյա գործունեության արդյունք:

Դասավանդողը կարող է ուղղորդել նրան, առաջարկել, որ նա իր սովորածը, ձեռք բերած հմտությունը փոխանցի մյուսներին և դրանով ավելի հմտանա, ներկայացնել, պատմել՝ օգտագործելով մեղիան: Սովորողի առօրյա փորձառությունը գալիս է դասարան, դառնում է ուսումնական նյութ, քննարկման թեմա, առաջադրանք, աշխատանք:

Կա՞ ավելի հետաքրքիր աշխատանք, քան օրվա կատարվածի, իրադարձությունների, ծանոթների, հարազատների, դպրոցի, դասարանի, ընկերների, իր հետաքրքրությունների մասին պատմելը, գրելը, էլեկտրոնային նյութեր ստեղծելը:

Կրթությունը դասատվության արդյունք չէ, այլ մշակույթի փոխանցում և յուրացում, որտեղ բոլորը և՛ փոխանցող են, և՛ յուրացնող:

Ուրեմն՝ սովորողների կրթության կազմակերպումը՝ որպես կենսակերպ. զարգացումը՝ սովորողի ամենօրյա և ողջօրյա գործունեության արդյունք:

Աշխարհն անընդհատ փոխվում է, փոխվում են կյանքը, կյանքի որակը, փոխվում են անգամ արժեքները: Ստացվում է, որ ամենապահպանողական համակարգը կրթական համակարգն է: Կարևոր չէ, թե դուք քանի տարեկան եք, բացեք այսօրվա դասագրքերը և կտեսնեք նույն անճաշակ, հազվադեպ նաև՝ ճաշակով ստեղծագործությունները, նույն տարտամ, անհետաքրքիր, ոչինչ չասող առաջադրանքները, ինչ ձեր ժամանակ էր:

Այսպես սպանում են մարդու ստեղծագործական բնատուր ունակությունները, նրան դարձնում են պասիվ, անհաղորդ:

Դպրոցից դուրս ամեն օր նոր տիպի, նոր որակի համակարգիչներ, նոթբուքեր,

ներթուքեր, հասանելի և մատչելի ինտերնետ, անընդհատ զարգացող թվային տեխնիկա: Երեխան աշխատում է դրանցով, հաղորդակցվում, կիրառում իր կենցաղում: Իսկ դասարանում հնամաշ և հնացած դասագրքեր: Մենք էլ՝ կյանքից ետ մնացած, գորշ, անհետաքրքիր ուսուցիչներ: Ու դեռ ուզում ենք, որ նա սովորի այդ խեղճ ու կրակ համարյա դարավոր դասագրքերով, երբ նրա առջև բաց են աշխարհի դռները:

Մեր՝ մեծերիս պարտականությունն է ուսումնական գործընթացում ՏՀՏ միջոցները դարձնել ուսումնական գործիքներ՝ տանը և դպրոցում: Կրթությունը կդառնա անընդհատ և գրավիչ, ուսումնական տարածքը՝ անսահման: Տանը, դպրոցում, ամենուր սովորողը կարող է աշխատել, սովորել, հետազոտել, ստեղծագործել, ստեղծածը տարածել, կապ ունենալ բոլորի հետ, խմբով առցանց աշխատել, քննարկումներ կազմակերպել: Էլ ի՞նչ միջոցով բոլորին պատմի հենց այս պահին կատարվող իրադարձության մասին, ինչպես ներկայացնի պապ ու տատի, քույր ու եղբոր կենդանի պատումները, հարազատի կամ պարզապես ծանոթի երգած անծանոթ երգը, ասած շուտասելուկն ու ծիսական ասիկը: Ուրիշ ինչպե՞ս կարող է ուսումնական նյութ ստեղծել և տարածել:

Էլեկտրոնային զարգացնող խաղերի, համակարգչային պարզագույն ծրագրերի ամենօրյա գործածման միջոցով համակարգչային գործնական հմտությունների ձևավորում: Ուսումնական գործընթացի արդյունքում ուսումնական էլեկտրոնային նյութերի ստեղծում՝ շնորհավորական և այլ բացիկներ, էլեկտրոնային ընթերցարաններ, օլիմպիական ամսագրեր, տեղեկատվություն, երաժշտական և այլ հոլովակներ, հարցազրույցներ, բանահավաքություն, քննարկում, արվածի խմբագրում, ֆոտոպատում, ֆիլմերի ստեղծում... Ստեղծելու, հաղորդակցվելու, զարգանալու անսահման հնարավորություններ, կարդալու, գրելու, խոսելու ու պատմելու մեծածավալ նյութ ու տարածք: Օտար լեզուների յուրացումը դադարում է ճգնավորի աշխատանք լինելուց: Կարանկենների ստեղծում, անհրաժեշտ տեղեկատվական և այլ նյութերի թարգմանություն, խաղեր, որոնումներ... արդյունքում սովորողը յուրացնում է այն լեզուն, ինչն իրեն է պետք և իր կրթությանը: Այլ դեպքում նա ստիպված կլինի չգիտես ում որոշած բառախմբերն ու քերականական կանոններն անօգուտ անգիր անել, որոշ ժամանակ հետո մոռանալ:

ՏՀՏ միջոցների գործածումը տանը և դպրոցում, մեղիանյութերի օգտագործումը, ստեղծումը սովորողին դարձնում է ինքնուրույն, պրպտող, անընդհատ զարգացող: Էլ ի՞նչ է պետք իրական կրթության համար: Էլ ո՞նց կենդանի պահի և փոխանցի ստեղծագործական ոգին:

Ուրեմն՝ ՏՀՏ միջոցների ամենօրյա կիրառում տանը և դպրոցում:

ՓՈՔԲ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՄԵՐ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Դուք ինչ ուզում եք՝ ասեք, ինչ անուն ուզում եք, դրեք՝ սան, երեխա, բալիկ, ես նրան Մարդ եմ ասում:

Դուք ինչ ուզում եք ասեք՝ կյանք, պարապմունք, գործ, դաս, խաղ. ես դրան [Մեծ խաղ](#) եմ ասում:

Առավոտյան խոսակցություն

- Արեգ, շուտ արա, ժամանակ չունենք, ուշանում ենք:

- Բա ժամանակը ե՞րբ է վերջանում:

Դե արի ու բացատրի, որ ժամանակը վերջ չունի, մանավանդ որ ինքդ էլ դա չես պատկերացնում: Բայց փորձում ես տակից դուրս գալ:

- Որ էդքան շատ է, ո՞նց ժամանակ չունենք:

Ո՞ւր ենք շտապում, ինչո՞ւ ենք տնօրինում բնություն կողմից տված ժամանակը, չենք թողնում, որ մարդն իր բնույթով, իր ներքին ժամանակ-ժամանակացույցով իր մեծ խաղն ապրի կամ խաղա ու զարգանա, ինքը տեսնի-շոշափի-փորձի-պատկերացնի-ճանաչի:

Չէ՛, մենք ենք որոշողը:

Ու մեկ էլ չորս-հինգ տարեկան Արեգը կհայտարարի.

- Ինձ վերաբերող հարցերը ե՛ս եմ որոշում:

Չի ասում, է՛, բոլոր հարցերի որոշողը ես եմ:

Իսկ մենք՝ մեծերս, դրել ու որոշել ենք, կտրտել ուրիշի անընդհատ ժամանակը, որովհետև ընդունակ չենք Մարդուն հարգելու: Այդ Մարդը դեռ ոչ մի տեղ չի շտապում, աշխարհի հետ կապը չի կտրել, և նրա մեջ դեռ մնում է կյանքի այն ռիթմը, որով նա ծնվել է: Երբ խախտում ենք այդ ռիթմը, նա լաց է լինում: Բա ի՞նչ անի: Անգամ այդ լացը մեզ չի սթափեցնում:

Մենք նրան չենք հասկանում՝ ռեժի՛մ կա, բա՛ն կա:

Նրա ներսում էլ ռեժիմ կա՛, բա՛ն կա՛՝ բնությա՛ն դրած ռեժիմը, որն ավելի իրական է և պատճառաբանված, քան մեր հորինածը: Ոչ ոք իրենից լավ չգիտի, թե իրեն այդ պահին ինչ է պետք:

Մարդը չի կարող ստեղծված կրթական համակարգի, այդ համակարգում ստեղծված կարգերի ու բարքերի գերին դառնալ: Նա արժանի է մեր հարգանքին:

Մենք պարտավոր ենք հարգել Մարդուն:

- Դու ինչի՞ ես հենց հիմա ուզում,- հարցնում է Արեգը զարմացած հայացքով, որովհետև ինքն այդ պահին ինչ-որ բան չի ուզել անել ու չի հասկացել, թե ինչո՞ւ պիտի անի:

Մարդուն մենք սիրում ենք, թեև սիրելու մեր ընտրած ձևն էլ ձևական է: Բայց հարգո՞ւմ ենք: Հետևեք ձեր վերաբերմունքին, արարք-գործողություններին: Օրվա մեջ քանի՞ անգամ ենք Մարդուն նեղացնում, անհասկանալի դառնում, անգամ՝ օտարանում: Չենք էլ նկատում-կարևորում, որովհետև մենք միշտ ճիշտ ենք:

Մարդուն վիրավորում ենք և անունը դաստիարակություն դնում:

Անարգանք ցանկացած պարտադրանքի, ստիպելու, քո փոխարեն որոշումներ կայացնելու մեջ: Ափսոս չափիչ չկա: Բայց կա Մարդու հակառակվելու, դիմադրելու հակումը, որը երբեմն լուրջամբ է լինում, բայց մեկ է, լինում է:

Քանի՞ անգամ ենք սաների հետ քննարկել իրենց վերաբերող հարցերը, խոսել նախատեսվող տոնի, ծեսի... իրականացման մասին: Կարևորե՞լ ենք...

Բայց ի՛նչ ճիշտ, դրական ու հարգալից կլիներ:

Այնինչ՝ հաճախ մեր գրույցներն այնքան պարզունակ են, որ մտածելու կարիք էլ չի լինում: Մարդուն հարգելու դեպքում նրան օգնում ես մտածել, ճամփաներ փնտրել:

Ազատ գործունեությունն ազատ տարածքում ազատ ընտրությամբ. ինքնուրույնություն, ինքնակազմակերպում, ինքնահսկում:

Մոնտեսորին է ասել՝ **Մարդը չի կարող ազատ լինել, եթե ինքնուրույն չէ:**

Բա ուրիշ ոնց: Անընդհատ թելադրանքի սովոր մարդը կմոլորվի, եթե հանկարծ կապերը թողնեն: Կապերով ապրելու խաղը դժբախտություն է:

Մարդը, որ ազատ է իր գործողություններում՝ սկսած առաջին լացից, ո՞նց կմոլորվի. մոլորվի էլ, մեկ է, ճամփան հաստատ գտնելու է, որովհետու միտքն ու ներքին բնագոյներն աշխատում են, խաղի կանոնները՝ ծանոթ և հասկանալի: Պետք չէ խանգարել:

Կարգապահությունն ազատության մեջ է... հենց ինքը՝ կարգապահությունն էլ գործունե- գործնական, ակտիվ Խաղ է: Պարապ մարդն է անկարգ:

Խմբում՝ ընկերների հետ ավելի հեշտ է ինքնակազմակերպվել, անելիքն անել: Այ, սա ռեժիմ է, սաների համատեղ գործի ռեժիմ, որի նախատեսողն ու կարգավորորդը խումբն է, խմբի հետ նաև դաստիարակն է՝ նույնքան ազատ ու ինքնուրույն, որքան իր սաներն են:

Երբ Մարդուն հարգում ես, ապրում ես իր հետ, իր նման, իրեն հավասար: Օգնում- հնարավորություն ես տալիս հաղթահարելու իր ազատությունը սահմանափակող ամեն արգելանք, բացի ուրիշերի ազատությունից:

Թող իրենք ընտրեն իրենց Խաղի իրենց ձևը, ինքնակազմակերպվեն, իրենց խումբն ու իրենց հավեսի գործը: Անհնար չէ, եթե դաստիարակը «իսկական ճիշտ է», կազմակերպումը ճիշտ է, Խաղը իրենցն է ու բազմազան: Ձեր փոխարեն իրենք կհսկեն իրենց գործը, դե իհարկե՝ ուղեք-չուղեք՝ կհարմարվեն միջավայրին, կյուրացնեն այն, փորձ ձեռք կբերեն, «իմաստուն կդառնան»: Կարևորը ճիշտ կազմակերպումն է:

Ստվերի հրճվանքին ինչ միջամտես: Կամ՝ տեսնես՝ ինչ հայտնաբերեցին հետոյի համար: Մենք էլ ենք, չէ՞, ծամածովում, սեթևեթում հայելու առաջ:

Բա ոնց խանգարես Մարդուն:

Մնում է կողքից նայես, «ջա՛ն» ասես ու իր նման հրճնես: Դահիճ չես, որ տանես մարզանք անելու կամ բույսերի մասին դասացուցակային-դասաժամային պարապմունքն անելու: Այ, որ միանաս իրեն ու իր հետ խաղաս Մեծ խաղի այս մասը... Ջա՛ն..

Ինչ կտա սեղանի շուրջ անհաղորդ նստած սանին դասական պարապմունքը՝ անազատ մտածողություն, կախվածություն ամենքից, ամեն ինչից... մեզնից:

Կարգապահությունն ազատության մեջ է,- կասեր Մոնտեսորին:

Պարտեզ մտնելու առաջին պահից իրենք են իրենց հոգսերն հոգացողը՝ սկսած հագուստ փոխելուց մինչև միջավայրի խնամք, նախաճաշի-ճաշի կազմակերպում: Դաստիարակի հետ, դաստիարակին հավասար կամ հակառակը՝ դաստիարակը սաների հետ, սաներին հավասար...

Խրախուսեք սաների ազատության առաջին դրսևորումները, ակտիվությունն ուղղեք իքնուրույնության զարգացմանը: Ինքնուրույնությունից էլ արժանապատվությունն է ծնվում:

Ուրեմն՝ Մարդու անելիքը. հետաքրքրությունների բավարարումը իրական առօրյա գործունեության միջոցով...էլ ի՞նչ... համապատասխան միջավայր և իր հետ ապրող դաստիարակ կամ հարազատներ: Մարդու իրական-անահատական-բնական զարգացման պայմաններ:

Իսկ շատերիս պատկերացրած կազապահը Ոչնչացված անհատն է:

Մեծ խաղ, որտեղ միատեղվում է սաների ողջ գործունեությունը նախակրթարանում՝ խոսքը, երաժշտությունը, շարժումը, փորձն ու փորձարկումը:

Միշտ չեմ հասկացել, թե ինչու են մարդիկ կաղապարներ ստեղծում, մտնում դրանց մեջ, փոքրերին էլ քաշում-տանում իրենց հետ: Ու երբ կաղապարը սեղմում է, չենք էլ կարողանում դրանից դուրս գալ, գուցե չենք էլ զգում, որ մեր ստեղծած կաղապարն է մեր թշնամին: Դժվա՞ր է անկաղապար ապրելը:

Սեպտեմբերիկից հետո Արեգն անընդհատ պզպզում էր՝ մեղու էր: Գիտե՞ք՝ ինչու: Շատ էր խաղացել «Մեղու»-ով, ծամել-ծամծմել էր ու մեկ էլ՝ կուլ տվել: Երկար ժամանակ մեղու էին նախակրթարանի բոլոր սաներն ու հինգ տարեկանները՝ պարտեզում և ընտանիքում: Անգիրը մի օրում չէին արել, խաղացել էին, ոտանավորն ու [երգը դարձել էին խաղալիք](#): Ներկայացում չէին խաղացել, իրենց խաղն էին խաղացել ու երգել, արտասանել, բայց իրենց խաղով, իրենց մեղվով, իրենց ծափ ու դմբոցով, իրենց շրխկանով, իրենց ռիթմով, ոտ ու ձեռով:

Ոչ թե դաստիարակի թելադրանքով մեղվի նման թևերը տարածել են՝ իբր թռչում են, այլ՝ շարժվել են, ինչպես ուզել են, ձեռքին հայտնված փայտե գդալի ձայնով «աղմկել են» խոսքի ռիթմին համապատասխան, իրենց խաղացած այլ խաղերից պատլիկ տեսարան, շարժում են բերել նոր խաղ:

Վերցրեք Արթուր Շահնազարյանի [«Կարավիկ»](#) երգարանը: Բոլոր երգերը կարելի է բեմադրել. եթե երգելու հետ ցույց տան, թե, ասենք, խմորն ինչպես են տրորում, կաքավն ինչպես է թռչում, մի քանի պարային շարժումներ էլ միացնեք, ու կունենաք սիրուն ներկայացում: Վատ չէ: Բայց այդպես շարունակելով՝ դուք էլ, երեխան էլ կամաց-կամաց կհայտնվեք կաղապարում, որովհետև միտքը տեսածից այն կողմ չի անցնում կամ կիսատ է մնում՝ մեր տեսած ու զծած սահմանում: Այնինչ միտքն էլ գիտի, թե ինչ անսահման է ինքը:

Երեխայինը ռիթմն է, իր մարմինը, իր ծափ-ծլնգոցն ու զնգոցը, իր զմփիկն ու թովռին: Իսկ մենք նրան ասում ենք՝ այսինչ բանը այսպես են ցույց տալիս: Ասում ենք՝ ցույց տուր, չենք ասում՝ խաղա: Ու քարանում է ընդհանուր, համատարած, գծված-մշակված կարծրատիպը:

Էլ ի՞նչ մտքի թռիչք, ի՞նչ գույն, ի՞նչ խաղ ու կապիկություն... Այնինչ, կարելի է, չէ՞,

խնդրին այսպես խաղալ: Ձեռքն ու ոտքն էլ են խաղի գործիք, ստեղծագործական են, իրենց լեզուն ունեն:

Երբ նախակրթարանների ծրագիրը նոր էինք սկսել, երաժշտական մանկական գործիքներ էինք փնտրում: Դրանք կա՛մ անորակ էին, կա՛մ էլ թանկ: Եվ լավ էր: Մկսեցինք ինքներս՝ մեծով-փոքրով շրխկացող, ծլնգացող, չխչխկացող գործիքներ պատրաստել: Շատ հավես էր: Հիմա էլ ենք դա սիրով անում: Չեք գտնի խումբ ու դասարան, որ դրանցից չունենան:

Ռիթմը մտավ խումբ, թելադրեց իր խաղը: Երգին միացան ոտանավորները, գործիքին միացան բնական շրխկանները՝ ոտքերը, ձեռքերը, լեզուների ճլտոցները, մատների ճտճտոցները: Եվ լավ էր, որովհետև ստիպված էինք կա՛մ խաղ-շրխկացնել, կա՛մ երգի սովորական ներկայացում սարքել: Մենք ձայնն ու ռիթմն ընտրեցինք և մարմինն իր շարժումով:

Մնաց խաղը զարգացնել, որ հանկարծ կաղապարում չհայտնվենք, որ ռիթմը, ձայնն ու շարժումը չմնան տեղում կամ արհեստականորեն միատեղվեն, այլ համահունչ, ամբողջական խաղերգառտանավոր ստացվի:

Առաջին փորձերից մեկը [Քուրիկ Զիզին էր](#):

Մենք լիովին չազատվեցինք կարծարտիպերից: Երևի պատճառը նաև այն էր, որ խաղացինք մենք՝ մեծերս, խաղացինք այն ժամանակ, երբ մեր պատկերացումները խաղի մասին տունտունիկից և բժիշկ-բժիշկից էին կախված:

Հայաստանում ուսուցիչների, մանկավարժությանն առնչվող մասնագետ շատերի ամենասիրած արտահայտությունը «խաղով ուսուցանել»-ն է: Հարցրեք, և կպատասխանեն, որ խաղը կա՛մ էլեկտրոնային-զարգացնող է լինում, կա՛մ հատուկ-ուսուցողական, ինչ-որ խաղեր կթվարկեն, որոնք սեղանի մոտ են խաղում, լավագույն դեպքում՝ տունտունիկն ու բժիշկ-բժիշկը կնշեն: Գիտե՞ք ինչու՝ որովհետև այսպես կոչված «խաղի» նպատակը իբր թե մաթեմատիկա սովորեցնելն է կամ տառերը ճանաչել տալը: Իբր թե, որովհետև գաղափարն արհեստական է, դատարկ ու չի իրականացվում: Նպատակը հո երեխայի կյանքը չէ, մշակույթ փոխանցելն ու զարգացնելը չէ:

Այդպես էլ իրականում ոչ ոք չի խաղում, որովհետև Մեծ խաղի պատկերացումը չկա կամ տունտունիկից այն կողմ չի անցնում, երեխան էլ կապ չունի խաղ հորինելու, ինքնաբուխ, ստեղծական, անսպասելի, հանպատրաստից խաղալու հետ: Եթե այդպես խաղում էլ է, ո՞վ է կարևորողը, դիտարկողն ու գրանցողը: Ո՞վ է ասում, որ բժիշկ-բժիշկ խաղալիս խաղում են, իսկ ասենք՝ ծաղիկ ջրելիս կամ սեղանի փոշին մաքրելիս կամ աշխատելու սեղանը դասավորելիս չեն խաղում:

Իրականում մենք հո գիտենք, թե ինչ հարուստ ու բազմազան է աշխարհը, ինչքան բան կա այս աշխարհում, որ կորցրել ենք կամ մի կողմ դրել, ու չենք թողնում՝ մոտիկ գա: Չեն կարող մանկական խաղերն այդքան սահանափակ ու խղճուկ լինել, որքան էլ

դրանք զարգացնող անվանենք: Խաղը երեխայի, նաև մեծերի, կյանքի ընթացքն է, նայած թե տվյալ պահին ինչ էս խաղում և ինչի անունն ենք խաղ դրել:

Մեծ խաղ՝ ասել է Սաքուլի, Նարեկի, Լևոնի, Արեգի (Գեղարվեստի նախակրթարանի հայտնի 4 ընկերներն են) և մյուսների կյանքը, ապրած պահը, օրը, տարին՝ ազատ, ինքնաբուխ, իրենց որոշելով, իրենց հետաքրքրությամբ:

Հաշվոցիկ-հաշվերգեր, ծափխաղեր... 0-3 տարեկանների համար

Սրանք մեծ խաղի մասն են, որ մեծ է, մեծ խաղ է:

Այս խաղիկներն անընդհատ փոփոխվել են, բազմացել են, հաճախ խճճվել ու խառնվել, որովհետև փոխանցողը մեծն է, բայց ասողը բլբլան, հազիվ խոսող, անգամ չխոսող փոքրն է, որը բառն արտասանել է, ինչպես կարողացել է, ինչպես ստացվել է, ինչպես զգացել է: Ծնվել են ճվիկների, հաշվոցիկների, ծափխաղերի, [դմվոցիկների շարժումները](#), շարժվողներն էլ երեխաներն են եղել: Բա ոնց, ով պիտի իրենց փոխարեն աներ: [Եթե մեկն էլ աներ, իրենց հետ պիտի աներ:](#)

Արդեն մի երկար շրջան դրանք մոռացվել են: Մոռացվել են, որովհետև չեն կարևորվել, որովհետև խաղացող մի կողմը ժամանակ չունի, դրա փոխարեն կա հեռուստացույց հիվանդությունը, որն աղբով է լցնում երեխայի միտքը, աղավաղում պատկերացումները:

Մտեք ու տեսեք, թե ինչ աղբ են սովորում, ինչ անճաշակություն է: Այո, չի խաղում. սովորում է, այն էլ առանց խաղի: Խաղալիքն էլ լավագույն դեպքում Բարբի տիկնիկն է՝ իր անճաշակ հավաքածուով:

Բայց որ խոսքն ու ռիթմը շատ լավ խաղալիք են, երևի քչերը գիտեն, ինչպես քչերը գիտեն, որ ցանկացած լավ հեքիաթ կարող է լավ խնդրագրքի «հումք» դառնալ:

Մենք խաղացինք, ու հիմա մեր 2-3 տարեկանները, երբ չեն մարզվում ու գլուխկոնծի տալիս, հեծանիվ չեն քշում, ուզում են հանգստանալ կամ պարզապես չխանգարել քնած ընկերներին, գորգին նստած կամ խմբում այս ու այն կողմ քայլելով, իրար ձեռքի զարկելով սիրով ու հաճույքով խաղում են: Ընտանիքներում էլ են սկսել խաղալ. սովորեցնողն էլ երեխան է՝ մեր սանը, որ խաղիկը ընտանիք է տարել:

Այդ գողտրիկ ասերեգերից մինչև մանկական փոքրիկ-ծես արարողությունները, երգ ու պար՝ իրենց նույնիսկ արդեն անհասկանալի խոսքով, ռիթմով, հենց այն են, ինչ պետք է: Դրանք՝ իրենք էլ փոքր ծես-արարողություն են: Հնացած չեն, որովհետև դրանց մեջ ամեն սերունդ իր ռիթմն ու էներգիան է դնում, մարմինն է օգտագործում: Մենք էլ մերը կանենք:

[Լեզուն էլ փաթ է ընկնում, ու նոր, անհասկանալի բառ է ծնվում](#), որ ոչ միայն չի խանգարում երեխային, այլ խոսքն ավելի գունավոր, համով-հոտով է դարձնում: Ու ստացվում է, հետագայում ջաղացի կամ խնոցու, խաղողաքաղի կամ Զիզիի մասին երգելիս խաղին՝ խոսք-ռիթմ-երգ խաղին շարժում ու ռիթմ է տալիս՝ իր մարմնին, մտածողությանը, զգացողությանը համապատասխան:

Պարբ, խաղը, ասմունքը, երգն ու մարզանքը պետք է դիտել որպես երգ երաժշտության դասավանդման համագործակցության և հավասար միավորներ: Արթուր Շահնագարյան

«Եղանակները պետք է կազմվեն առողջանության օրենքներին խիստ հնազանդելով: Այնպես, որ երեխան ճանաչի եղանակի հիմնաձայնը, շեշտը, վերջակետը»: Կոմիտաս

Այսինքն՝ երեխան չպիտի զգա, թե ինչպես հանկարծ արտասանությունը վերածվեց երգի: Տեսեք նախակրթարանի կոմիտասյան ծրագրի մի հատվածը: Շնորհակալություն Արթուր Շահնագարյանին:

*Առաջին տարի
Առաջին կիսամյակ*

*Նվագի կամ երգի առաջնորդությամբ՝
ա) քայլել
բ) խաղալ
Եթե մանուկն ինքնաբերաբար երգե, չպետք է խանգարել:*

*Երկրորդ կիսամյակ
ա) քայլել
բ) խաղալ
գ) մարմնամարզել
Երգելն իբրև առարկա չէ, որ պետք է ավանդել, այլ՝ լսելով անդրադարձնել:*

*Երգելն սկսել երրորդ կիսամյակին:
Երգի սկզբնավորության հիմքը կարելի է դնել պատիկ մանկան խաղերով,
օրինակ՝ ծիվ-ծիվ:
Եղանակները պետք է կազմվեն առողջանությամբ՝ օրենքներին խիստ
հնազանդելով.
քայլել,
խաղալ,
պարել,
ասել[1]: Կոմիտաս*

Փայտե գդալներ և այլ հարմար իրեր, ծնգաններ ու էլի զնգացող, շրխկացողներ... նախակրթարանում դարձել են ուսումնական խաղալիքներ: Լավ դաստիարակը խումբը դարձնում է մանկական համույթ, շրխկացնելը առավոտյան ծեսի բաղկացուցիչ է, երաժշտության դաստիարակներն էլ խաղի իսկական-իրական մասնակիցներ: Պարտեզների խմբերը դառնում են խումբ - համույթներ՝ իրենց ծրագրերով, համարներով, անուններն էլ՝ «Շրխկան»: Դառնում են, որովհետև կայացման ընթացքը շարունակվում է: Միբեղի աղմուկ, որ աստիճանաբար վերածվում է երաժշտության:

Ստեփանյան Տաթևը, Խառատյան Կարինեն այնքան ազատ են, այնքան ինքնավստահ ու ստեղծական, որ չեն վախենում այդ աղմուկից, որովհետև դրա մեջ երաժշտություն են տեսնում, ազատ շարժում: Ստեղծագործական աղմուկ, որի մեջ ազատ շարժում կա ու ազատ մտածողություն: Այ, եթե այդ ազատությունը բոլորիս մեջ լինի, որ կարողանանք պոկվել սովորական, առօրյա շարժ ու ձևից, կարողանանք դրսի, բակի, մեր մտքի խաղը միացնել խոսքին ու երաժշտությանը, ինչպես Տաթևն ու Կարինեն, հաստատ հետաքրքիր կլինի: Թե չէ բոլորս էլ գիտենք՝ կրկնությունը բթության մայրն է:

Տեսա՞ք՝ ինչպես «աղմուկին իր տեղը դրեցին», ինչպես են գնում: Տեսնես՝ ուր կհասնեն: Տարածությունը մեծացրեք. բակում, այգում, ամենուր...

Ինքն իրեն, կամաց-կամաց երգին ոտանավոր-խոսք միացավ, խոսքին՝ խաղ-մնջախաղ: Հիմա կամաց-կամաց նկարագրական շարժումները դառնում են ավելի խաղային, այն, որ սաներն են սիրում:

Մեպտեմբերիկների և հոկտեմբերիկների ծեսն ավելի մոտ էր խաղին, համենայնդեպս ծանոթ ու տարածված կաղապարային ներկայացումն ավելի քիչ էր, խաղ-շարժումն՝ ավելի շատ: Ստեղծվեց դասվար-դաստիարակների համույթը, իսկական դասվար-դաստիարակի համույթ, որի նպատակը խաղի ստեղծումն է, այդ խաղը խումբ ու դասարան տանելը: Ի՞նչ հաճույքով, հրճվանքով են խաղում աղջիկները: Բոլորս տիկին Մարինեի աջակիցն ու օգնականն ենք, որովհետև խաղը մեզ սիրելի է, մեր մեջ: Կարծում եմ՝ Մարմարյա սրահը նորության, նոր լուծումների կարիք ունի: Լավ է, իհարկե, որ մենք հասել ենք մի տեղ, որ ամեն ինչ սահուն գնում է, բայց մենք փորձարարական ենք, չէ՞: «Շրխկան»-ը պիտի փորձի ու նորարարության խումբ լինի: Թե չէ այն ինչ կա, արդեն կա ու արվում է: Իհարկե հեղափոխություն չէ, այլ՝ քայլ քայլ, փոճելով, ուսումնասիրելով, մշակելով, զարգացնելով: Մա մեծ խաղի մի մասն է:

ՄԵԾ ԽԱՂ. ԽՈՍՔԸ՝ ԽԱՂԱԼԻՔ

Ինչքան խաղալիք կա իրական, ակտիվ, բազմագույն, բազմազան կյանքում՝ իրական և արհեստական խաղալիքներ: Իրական խաղալիքը կյանքն է ստեղծել կամ երեխան: Արհեստականը՝ բիզնեսմենը. կարևոր չէ՝ որ դարում: Որքան «զարգացել» է բիզնեսը, այնքան փչացել է խաղալիքը: Քարից ու ծառից հեռացել է, մտել է քաղաքի քաղքենի տարածք, դարձել միադեմ, միմաստ: Հիմա ո՞վ է քարկտիկ խաղում:

Բառ՝ իմաստով կամ իմաստներով, ձայնով կամ անձայն, բազմադեմ, մենակ կամ խմբով: Խաղա՝ ոնց ուզում ես, կողքին դիր՝ ում (այո՛ւմ, որովհետև բառը շունչ ունի) ուզում ես: Դեռ չեմ խոսում բույրի, գույնի, երաժշտության, խորքի... տեսե՞ք, է՛: Բարև, բարի լույս, բարի առավոտ, բարի օր, բարի գիշեր, բարի հաջողում, բարի տեսանք...

Ամեն Աստծո առավոտ խաղ-ծեսին բա չասե՞ն բարն՝ բոլորին՝ ամեն մեկին հատիկ-հատիկ, ամեն մեկի թաթիկին զարկ-ողջույնով: Կհասկանա, կսիրի բառը, կխաղա բարի բառով՝ նկարելով, տարբեր ձայներանգներով և ռիթմով կշրխկացնի, կերգի. Հա՛, բառը կերգի: Պետք չէ, որ բացատրի իմաստը, կամ կուզի, թող բացատրի: Որ կողքին հարևան բառ դրեց, բարին ավելի հասկանալի, նշանակում է՝ ծանոթ կդառնա: Իսկ եթե, չգիտես որտեղից, գտավ-պեղեց ու բերեց անսպասելի, անհավանական մի բառ, բերեց դրեց «բարի»-ի կողքին, երևակայությունը կգարթնի ու կգնա՛ ...

- *Մուրթ բարի է: Ասե՛մ՝ ինչու: Որ դրսում պահկվոցի խաղաս, քեզ կպահի:*
Բարի մութ... լավ է: Մեծահասակը չէր կարողանա այսպես գտնել-տեսնել, զգալ, ձևակերպել, որովհետև պահմտոցին Արեգի՛ սիրած խաղն է, բայց դեռ տանն է խաղում, սպասում է եղանակի տաքանալուն: Որտեղից ուր հասավ: Ի՞նչ խաղալիք կարող էր Արեգին այդ ճանապարհով տանել:

Անընդհատ խաղացեք սիրելի բառերով, իրենք որոշեն-առաջարկեն այդ «սիրելիին», ամեն մեկն իրենը: Կողքի բառն ինքն իրեն կգա, եթե սանն ամեն օր բառախաղ է խաղա, եթե բառ նվիրի մորը, հորը, տատ ու պապին... ում ուզում է:

- *Ես քեզ խուտուտ եմ նվիրում:*
- *Ինչո՞ւ խուտուտ:*
- *Որովհետև, դու միշտ ասում ես՝ խուտուտ չունեմ:*
- *Ի՞նչ անեմ խուտուտը:*
- *Որ ծիծաղից թուլանաս:*

Որքա՞ն ենք այսպիսի բաներ լսել: Լսել ենք, չենք կարևորել, այլապես այդքան խոտան-խաղալիք չէինք ստեղծի, «Բլբլոց» անունով զգրոց կսարքեինք: Այնինչ՝ դրա ձևն ու լուծումն էլ չգիտենք: Մեր դաստիարակներն անգամ չեն կարողանում մի հասարակ բառաքսակ ստեղծել: Բառը, խոսքը, խոսքի արժեքն այսպիսին է՝ սահմանի մեջ և սահմանից դուրս, մեծերի գծած սահման-կաղապարից դուրս: Ու իմ ասած դաստիարակը, դասվարը, դեռ դժվարությամբ է ազատվում-դուրս գալիս մանկուց իրեն պարտադրված կաղապարից, էլ ոնց խոսքաքսակ կամ բառաքսակ ստեղծի: Հենց 2-5 տարեկան դարձավ, գուցե...

Ամեն առավոտ բառ նվիրելու խաղ. առավոտյան ծեսին:
- *Մարգի՛ս, ես քեզ ջուր բառն եմ նվիրում:*

Օգնեք, խրախուսեք, որ փնտրի, փորփրի իր բառապաշարը, լսած-մտապահած, քիչ առաջ հորինած բառը:
Այսինքն՝ բառհորինուկ խաղա, բառ հորինի, որ քիչ հետո կամ վաղը նվիրելու բան ունենա: Սովորություն, առօրյա դառնա՝ պատուհանները բացելու նման:
Բառ ասելը, բառ փնտրել-գտնելը, տանից խումբ բերելը (ա՛յ լավ տնային առաջադրանք՝ տարբեր միջոցներով տանից բառ բերել ընկերների, դաստիարակների համար) և խմբից տուն տանելը սիրելի զբաղմունք դառնա:
Հետո՞ ...
Հետո բառերը կհանդիպեն, խաղն էլ կկոչվի՝ «Հանիպեցին բառն ու բառը»:
Ես իմ չսիրած կամ սիրած բառն եմ ասում, դու՛ քոնը: Արի՛ միացնենք:

Տեսնենք՝ ինչ դուրս կգա: Բա որ ստացվածը նկարե՛նք: Ի՛նչ երևակայական նկարներ կստացվեն, այլնտրանքային, ստեղծագործական... Հազիվ կազատվենք անկենդան ծառ ու ուղղանկյուն տներ նկարելուց:

Ռոդարին, Թումանյանն ու Աղայանն էլ կփառավորվեն:

Կամաց-կամաց գալիս ենք մեզ այնքան սիրելի շուտասելուկին, որ միշտ էլ սովորել ենք: Սովորել ենք, բայց խաղ չենք դարձրել, հորինուկ ու զբաղմունք: Հենց կապեցինք շրիկանի հետ, հարվածեցինք աթոռին կամ հատակին, բռունցք տվինք-առանք, այն ոչ միայն սիրելի դարձավ, [այլև նորերը հորինեցինք](#): Խոստովանեմ՝ սկզբում մեծերի օգնությամբ, և դա լավ է: [Հիմա փոքրերը փորձում են ինքնուրույն լինել](#): Այսպիսի [բաներ](#): Ո՛նց են խաղում բառով, ձայնով, լեզուն ծոմոնելով-ծլպացնելով: Դե մի քիչ դժվար է, չէ՞: Թող շուտասեն, որքան ուզում են: [Հետո վարպետանում են, իհարկե](#): Բայց ե՞րբ, որտե՞ղ: Դասի ժամանակ: Իսկ իրականում, երբ այն կապվում է խաղի, շարժումի, ինչ-որ գործունեության հետ, դառնում է յուրային, որովհետև մեջն այնքան խաղ կա: Հիշո՞ւմ եք՝ Կոմիտասը որքան էր կարևորում խոսքը, խոսքի ռիթմը, խոսքը չէր էլ առանձնացնում երգից: Բառխաղ, նաև՝ [այսպես](#):

Ափսոս Անուշիկը բառը հուշում է կամ հանձնարարում: Հաստատ հաջորդը բառհորինուկն է լինելու, որի ժամանակ դժվար թե կարողանաս հուշել: Հորինոցի է, չէ՞, ինչ իմանաս՝ ինչ բառեր կհորինեն, ինչ իմաստ կդնեն ծանոթ կամ հենց նոր հորինած բառերի մեջ, ինչպես կզգան բատրած բառը:

Ուրախ այբբենարանների մասին դեռ կխոսենք: Բա բառադոմինոն...

- Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:
Կամ՝

- Թե չէ, դես կթոչեմ, դեն կթոչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թոչեմ:
Խոսքի մեջ՝ խաղ, ու խաղի մեջ՝ խոսք:

Մանուկ հասակում այս լեզուն մարսած մարդը չի կարող միտք չունենալ: Միտքն է ճշմարիտ զարգացման աղբյուրը և արդյունքը, ոչ թե անկենդան լեզվով բարբաջանքներ հորինելը՝ թեկուզ անթերի ուղղագրությամբ և շարահյուսությամբ: Մի՛ թողեք դիտեն այն հեքիաթ-ֆիլմերը կամ մուլֆիլմերը, որոնց հեղինակները իբր թե խմբագրում են հանճարեղ Թումանյանին, Աղայանին, մի՛ հեռացեք նրանց խոսքից: Հեքիաթները դառնում են Բարբի, այն էլ՝ էժանազին, երեխաների գլուխը մի՞ լցրեք կարմիր գլխարկներով: Միջավայր ստեղծեք, հետը խաղացեք, որ «Ծիտը», «Անհաղթ աքլորը», «Ճամփորդները» և մնացած հեքիաթներն ու պատումները բառ-բառ իմանան՝ ստվերախաղով, մնջախաղով (մի խումբն ասի, մյուսը՝ ցույց տա), հարց ու պատասխանով:

Բաժանվեք երեք խմբի.

- Լինում է չի լինում մի ծիտ:
 - Լինում է չի լինում մի ծի՞տ:
 - Լինում է, չի լինում մի ծի՛տ:
- Հարցականը որտեղ կուզեք՝ դրեք:

Երգելով, շրխկացնելով, վանկատելով... ի՛նչ ուզես, կարող ես մտածել, միայն ոչ անկենդան կրկնությամբ: Խաղացեք հատված-հատված:

Եթե անգամ ինչ-որ բան անհասկանալի կմնա, եթե՛ մեկ է, թումանյանական լեզուն՝ իր պատկերներով, լեզվական կառույցներով, արտահայտություններով, խաղով ու գույնով մշակույթ կձևավորի, **խոսք**, զգացողություն, միտք, ճաշակ:

ՄԱ ՄԵԾ ԽԱՂԻ ՄԻ ՄԱՄՆ Է...

Մեծ խաղ, որտեղ միատեղվում է սաների ողջ գործունեությունը նախակրթարանում՝ խոսքը, երաժշտությունը, շարժումը, փորձն ու փորձարկումը:

Միշտ չեմ հասկացել, թե ինչու են մարդիկ կաղապարներ ստեղծում, մտնում դրանց մեջ, փոքրերին էլ քաշում-տանում իրենց հետ: Ու երբ կաղապարը սեղմում է, չենք էլ կարողանում դրանից դուրս գալ, գուցե չենք էլ զգում, որ մեր ստեղծած կաղապարն է մեր թշնամին: Դժվա՞ր է անկաղապար ապրելը:

Սեպտեմբերիկից հետո Արեգն անընդհատ պզպզում էր՝ մեղու էր: Գիտե՞ք՝ ինչու: Շատ էր խաղացել «Մեղու»-ով, ծամել-ծամծամել էր ու մեկ էլ՝ կուլ տվել: Երկար ժամանակ մեղու էին նախակրթարանի բոլոր սաներն ու հինգ տարեկանները՝ պարտեզում և ընտանիքում: Անգիրը մի օրում չէին արել, խաղացել էին, ոտանավորն ու [երգը դարձել էին խաղալիք](#): Ներկայացում չէին խաղացել, իրե՛նց խաղն էին խաղացել ու երգել, արտասանել, բայց իրե՛նց խաղով, իրե՛նց մեղվով, իրե՛նց ծափ ու դմփոցով, իրե՛նց շրխկանով, իրե՛նց ռիթմով, ոտ ու ձեռով:

Ոչ թե դաստիարակի թելադրանքով մեղվի նման թևերը տարածել են՝ իբր թռչում են, այլ՝ շարժվել են, ինչպես ուզել են, ձեռքին հայտնված փայտե գդալի ձայնով «աղմկել են» խոսքի ռիթմին համապատասխան, իրենց խաղացած այլ խաղերից պատլիկ տեսարան, շարժում են բերել նոր խաղ:

Վերցրեք Արթուր Շահնազարյանի «[Կաքավիկ](#)» երգարանը: Բոլոր երգերը կարելի է բեմադրել. եթե երգելու հետ ցույց տան, թե, ասենք, խմորն ինչպես են տրորում, կաքավն ինչպես է թռչում, մի քանի պարային շարժումներ էլ միացնեք, ու կունենաք սիրուն ներկայացում: Վատ չէ: Բայց այդպես շարունակելով՝ դուք էլ, երեխան էլ կամաց-կամաց կհայտնվեք կաղապարում, որովհետև միտքը տեսածից այն կողմ չի անցնում կամ կիսատ է մնում՝ մեր տեսած ու զծած սահմանում: Այնինչ միտքն էլ գիտի, թե ինչ անսահման է ինքը:

Երեխայինը ռիթմն է, իր մարմինը, իր ծափ-ծլնգոցն ու զնգոցը, իր զմփիկն ու թովռին: Իսկ մենք նրան ասում ենք՝ այսինչ բանը այսպես են ցույց տալիս: Ասում ենք՝ ցույց տուր, չենք ասում՝ խաղա: Ու քարանում է ընդհանուր, համատարած, զծված-մշակված

կարծրատիպը:

Էլ ի՞նչ մտքի թռիչք, ի՞նչ գույն, ի՞նչ խաղ ու կապիկություն... Այնինչ, կարելի է, չէ՞, խնոցին այսպես խաղալ: Ձեռքն ու ոտքն էլ են խաղի գործիք, ստեղծագործական են, իրենց լեզուն ունեն:

Երբ նախակրթարանների ծրագիրը նոր էինք սկսել, երաժշտական մանկական գործիքներ էինք փնտրում: Դրանք կա՛մ անորակ էին, կա՛մ էլ թանկ: Եվ լավ էր: Սկսեցինք ինքներս՝ մեծով-փոքրով շրխկացող, ծլնգացող, չխչխկացող գործիքներ պատրաստել: Շատ հավես էր: Հիմա էլ ենք դա սիրով անում: Չեք գտնի խումբ ու դասարան, որ դրանցից չունենան:

Ռիթմը մտավ խումբ, թելադրեց իր խաղը: Երգին միացան ոտանավորները, գործիքին միացան բնական շրխկանները՝ ոտքերը, ձեռքերը, լեզուների ճլտոցները, մատների ճտճտոցները: Եվ լավ էր, որովհետև ստիպված էինք կա՛մ խաղ-շրխկացնել, կա՛մ երգի սովորական ներկայացում սարքել: Մենք ձայնն ու ռիթմն ընտրեցինք և մարմինն իր շարժումով:

Մնաց խաղը զարգացնել, որ հանկարծ կաղապարում չհայտնվենք, որ ռիթմը, ձայնն ու շարժումը չմնան տեղում կամ արհեստականորեն միատեղվեն, այլ համահունչ, ամբողջական խաղերգառտանավոր ստացվի:

Առաջին փորձերից մեկը [Քուրիկ Զիզին էր](#):

Մենք լիովին չազատվեցինք կարծարտիպերից: Երևի պատճառը նաև այն էր, որ խաղացինք մենք՝ մեծերս, խաղացինք այն ժամանակ, երբ մեր պատկերացումները խաղի մասին տունտունիկից և բժիշկ-բժիշկից էին կախված:

Հայաստանում ուսուցիչների, մանկավարժությանն առնչվող մասնագետ շատերի ամենասիրած արտահայտությունը «խաղով ուսուցանել»-ն է: Հարցրեք, և կպատասխանեն, որ խաղը կա՛մ էլեկտրոնային-զարգացնող է լինում, կա՛մ հատուկ-ուսուցողական, ինչ-որ խաղեր կթվարկեն, որոնք սեղանի մոտ են խաղում, լավագույն դեպքում՝ տունտունիկն ու բժիշկ-բժիշկը կնշեն: Գիտե՞ք ինչու՞ որովհետև այսպես կոչված «խաղի» նպատակը իբր թե մաթեմատիկա սովորեցնելն է կամ տառերը ճանաչել տալը: Իբր թե, որովհետև գաղափարն արհեստական է, դատարկ ու չի իրականացվում: Նպատակը հո երեխայի կյանքը չէ, մշակույթ փոխանցելն ու զարգացնելը չէ:

Այդպես էլ իրականում ոչ ոք չի խաղում, որովհետև Մեծ խաղի պատկերացումը չկա կամ տունտունիկից այն կողմ չի անցնում, երեխան էլ կապ չունի խաղ հորինելու, ինքնաբուխ, ստեղծական, անսպասելի, հանպատրաստից խաղալու հետ: Եթե այդպես խաղում էլ է, ո՞վ է կարևորողը, դիտարկողն ու գրանցողը: Ո՞վ է ասում, որ բժիշկ-բժիշկ խաղալիս խաղում են, իսկ ասենք՝ ծաղիկ ջրելիս կամ սեղանի փոշին մաքրելիս կամ աշխատելու սեղանը դասավորելիս չեն խաղում:

Իրականում մենք հո գիտենք, թե ինչ հարուստ ու բազմազան է աշխարհը, ինչքան բան

կա այս աշխարհում, որ կորցրել ենք կամ մի կողմ դրել, ու չենք թողնում՝ մոտիկ գա: Չեն կարող մանկական խաղերն այդքան սահանափակ ու խղճուկ լինել, որքան էլ դրանք զարգացնող անվանենք: Խաղը երեխայի, նաև մեծերի, կյանքի ընթացքն է, նայած թե սովյալ պահին ինչ ես խաղում և ինչի անունն ենք խաղ դրել:

Մեծ խաղ՝ ասել է Սաքուլի, Նարեկի, Լևոնի, Արեգի (Գեղարվեստի նախակրթարանի հայտնի 4 ընկերներն են) և մյուսների կյանքը, ապրած պահը, օրը, տարին՝ ազատ, ինքնաբուխ, իրենց որոշելով, իրենց հետաքրքրությամբ:

Հաշվոցիկ-հաշվերգեր, ծափխաղեր... 0-3 տարեկանների համար

Մրանք մեծ խաղի մասն են, որ մեծ է, մեծ խաղ է:

Այս խաղիկներն անընդհատ փոփոխվել են, բազմացել են, հաճախ խճճվել ու խառնվել, որովհետև փոխանցողը մեծն է, բայց ասողը բլբլան, հազիվ խոսող, անգամ չխոսող փոքրն է, որը բառն արտասանել է, ինչպես կարողացել է, ինչպես ստացվել է, ինչպես զգացել է: Ծնվել են ճվիկների, հաշվոցիկների, ծափխաղերի, [դմփոցիկների շարժումները](#), շարժվողներն էլ երեխաներն են եղել: Բա ոնց, ով պիտի իրենց փոխարեն աներ: [Եթե մեկն էլ աներ, իրենց հետ պիտի աներ:](#)

Արդեն մի երկար շրջան դրանք մոռացվել են: Մոռացվել են, որովհետև չեն կարևորվել, որովհետև խաղացող մի կողմը ժամանակ չունի, դրա փոխարեն կա հեռուստացույց հիվանդությունը, որն աղբով է լցնում երեխայի միտքը, աղավաղում պատկերացումները:

Մտեք ու տեսեք, թե ինչ աղբ են սովորում, ինչ անճաշակություն է: Այո, չի խաղում. սովորում է, այն էլ առանց խաղի: Խաղալիքն էլ լավագույն դեպքում Բարբի տիկնիկն է՝ իր անճաշակ հավաքածուով:

Բայց որ խոսքն ու ռիթմը շատ լավ խաղալիք են, երևի քչերը գիտեն, ինչպես քչերը գիտեն, որ ցանկացած լավ հեքիաթ կարող է լավ խնդրագրքի «հումք» դառնալ:

Մենք խաղացինք, ու հիմա մեր 2-3 տարեկանները, երբ չեն մարզվում ու գլուխկոնծի տալիս, հեծանիվ չեն քշում, ուզում են հանգստանալ կամ պարզապես չխանգարել քնած ընկերներին, գորգին նստած կամ խմբում այս ու այն կողմ քայլելով, իրար ձեռքի զարկելով սիրով ու հաճույքով խաղում են: Ընտանիքներում էլ են սկսել խաղալ. սովորեցնողն էլ երեխան է՝ մեր սանը, որ խաղիկը ընտանիք է տարել:

Այդ գողտրիկ ասերեգերից մինչև մանկական փոքրիկ-ծես արարողությունները, երգ ու պար՝ իրենց նույնիսկ արդեն անհասկանալի խոսքով, ռիթմով, հենց այն են, ինչ պետք է: Դրանք՝ իրենք էլ փոքր ծես-արարողություն են: Հնացած չեն, որովհետև դրանց մեջ ամեն սերունդ իր ռիթմն ու էներգիան է դնում, մարմինն է օգտագործում: Մենք էլ մերը կանենք:

[Լեզուն էլ փաթ է ընկնում, ու նոր, անհասկանալի բառ է ծնվում](#), որ ոչ միայն չի խանգարում երեխային, այլ խոսքն ավելի գունավոր, համով-հոտով է դարձնում: Ու ստացվում է, հետագայում ջաղացի կամ խնցուկ, խաղողաքաղի կամ Զիզիի մասին

երգելիս խաղին՝ խոսք-ռիթմ-երգ խաղին շարժում ու ռիթմ է տալիս՝ իր մարմնին, մտածողությանը, զգացողությանը համապատասխան:

Պարը, խաղը, ասմունքը, երգն ու մարզանքը պետք է դիտել որպես երգ երաժշտությանդասավանդման համագործ և հավասար միավորներ: Արթուր Շահնագարյան

«Եղանակները պետք է կազմվեն առողջանության օրենքներին խիստ հնազանդելով: Այնպես, որ երեխան ճանաչի եղանակի հիմնաձայնը, շեշտը, վերջակետը»: Կոմիտաս

Այսինքն՝ երեխան չպիտի զգա, թե ինչպես հանկարծ արտասանությունը վերածվեց երգի: Տեսեք նախակրթարանի կոմիտասյան ծրագրի մի հատվածը: Շնորհակալություն Արթուր Շահնագարյանին:

*Առաջին տարի
Առաջին կիսամյակ*

*Նվագի կամ երգի առաջնորդությամբ՝
ա) քայլել
բ) խաղալ
Եթե մանուկն ինքնաբերաբար երգե, չպետք է խանգարել:*

*Երկրորդ կիսամյակ
ա) քայլել
բ) խաղալ
գ) մարմնամարզել
Երգելն իբրև առարկա չէ, որ պետք է ավանդել, այլ՝ լսելով անդրադարձել:*

*Երգելն սկսել երրորդ կիսամյակին:
Երգի սկզբնավորության հիմքը կարելի է դնել պզտիկ մանկան խաղերով, օրինակ՝ ծիվ-ծիվ:
Եղանակները պետք է կազմվեն առողջանությամբ՝ օրենքներին խիստ հնազանդելով.
քայլել,
խաղալ,
պարել,
ասել[1]: Կոմիտաս*

Փայտե գդալներ և այլ հարմար իրեր, ծնգաններ ու էլի զնգացող, շրխկացողներ... նախակրթարանում դարձել են ուսումնական խաղալիքներ: Լավ դաստիարակը խումբը դարձնում է մանկական համույթ, շրխկացնելը առավոտյան ծեսի բաղկացուցիչ է, երաժշտության դաստիարակներն էլ խաղի իսկական-իրական մասնակիցներ: Պարտեզների խմբերը դառնում են խումբ - համույթներ՝ իրենց ծրագրերով,

համարներով, անուններն էլ՝ «Շրխական»: Դառնում են, որովհետև կայացման ընթացքը շարունակվում է: Միրելի աղմուկ, որ աստիճանաբար վերածվում է երաժշտության:

Ստեփանյան Տաթևը, Խառատյան Կարինեն այնքան ազատ են, այնքան ինքնավստահ ու ստեղծական, որ չեն վախենում այդ աղմուկից, որովհետև դրա մեջ երաժշտություն են տեսնում, ազատ շարժում: Ստեղծագործական աղմուկ, որի մեջ ազատ շարժում կա ու ազատ մտածողություն: Այ, եթե այդ ազատությունը բոլորիս մեջ լինի, որ կարողանանք պոկվել սովորական, առօրյա շարժ ու ձևից, կարողանանք դրսի, բակի, մեր մտքի խաղը միացնել խոսքին ու երաժշտությանը, ինչպես Տաթևն ու Կարինեն, հաստատ հետաքրքիր կլինի: Թե չէ բոլորս էլ գիտենք՝ կրկնությունը բթության մայրն է:

Տեսա՞ք՝ ինչպես «աղմուկին իր տեղը դրեցին», ինչպես են գնում: Տեսնես՝ ուր կհասնեն: Տարածությունը մեծացրեք. բակում, այգում, ամենուր...

Ինքն իրեն, կամաց-կամաց երգին ոտանավոր-խոսք միացավ, խոսքին՝ խաղ-մնջախաղ: Հիմա կամաց-կամաց նկարագրական շարժումները դառնում են ավելի խաղային, այն, որ սաներն են սիրում:

Սեպտեմբերիկների և հոկտեմբերիկների ծեսն ավելի մոտ էր խաղին, համենայնդեպս ծանոթ ու տարածված կաղապարային ներկայացումն ավելի քիչ էր, խաղ-շարժումն՝ ավելի շատ: Ստեղծվեց դասվար-դաստիարակների համույթը, իսկական դասվար-դաստիարակի համույթ, որի նպատակը խաղի ստեղծումն է, այդ խաղը խումբ ու դասարան տանելը: Ի՞նչ հաճույքով, հրճվանքով են խաղում աղջիկները: Բոլորս տիկին Մարինեի աջակիցն ու օգնականն ենք, որովհետև խաղը մեզ սիրելի է, մեր մեջ: Կարծում եմ՝ Մարմարյա սրահը նորության, նոր լուծումների կարիք ունի: Լավ է, իհարկե, որ մենք հասել ենք մի տեղ, որ ամեն ինչ սահուն գնում է, բայց մենք փորձարարական ենք, չէ՞: «Շրխական»-ը պիտի փորձի ու նորարարության խումբ լինի: Թե չէ այն ինչ կա, արդեն կա ու արվում է: Իհարկե հեղափոխություն չէ, այլ՝ քայլ քայլ, փոճելով, ուսումնասիրելով, մշակելով, զարգացնելով: Սա մեծ խաղի մի մասն է:

ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Հազիվ են, է՛, քայլում, 1-2 կամ 3 տարեկան են: Ինչքան շատ են գայթում-ընկնում: Տոտիկ-տոտիկ, մինչև ե՞րբ... Մինչև կանգնում են ոտքերի վրա, մինչև ճկուն ու հավասարակշռված են դառնում... Ե՞րբ է այդ մինչևը...

Ա՛յ, եթե չվախեցավ, չտատանվե՞ց... մինչև կարողացավ աստիճաններն ինքնուրույն ու անվտանգ բարձրանալ-իջնել, մինչև աթոռների տակով-վրայով սահեց-ելավ-պտակեց-թռավ-սողաց, քայլեց ուղիղ գծի կամ պարանի վրայով. կառավարեց մարմինն ու շարժումները, ծառ բարձրացավ...

Հրաշալի է, հավես, սիրելի, եթե չեն արգելում մանկանը, թողնում են, օգնում-աջակցում են, որ նա իր կամքով-ուզելով, մեծերի ու մյուս փոքրերի հետ ազատ, առանց արգելանք-խոչընդոտի վազի, մազլի, ցատկի... իսկական մանկական մարմնակրթություն՝ բնական-իրական, ընկնել-ելնելով՝ [անվտանգ ընկնել-ելնելով](#): Վատ չէ, որ կան մարզական ծրագրեր, մարզագործիքներ:

Լավ չէ, եթե դրանք պարտադրանքով-պարապմունքով են, դասացուցակով:
Լավ չէ, եթե մարգագործիք են ու վերջ, խաղալիք չեն դարձել, ինչպես ամեն ինչ սանի շրջապատում, **գործիք** են մնացել:

Ստացվում է այնպես, որ նախակրթարանում սանի կյանքի տնօրենը դաստիարակն է... Չէ, նա էլ չէ: Ինչ-որ կաբինետում (ոչ աշխատասենյակում) նստած չինովնիկ է որոշում, թե օրը քանի թույլ է, որ ժամին պիտի մարզանք անի 2 կամ 3 տարեկանը: Մարզանք անի, է, ոչ թե մարզվի: Բա երեխան, նրա բնույթը, պահանջներն ու պահանջունքները, բա բնությունը... օրն՝ իր անցուդարձով: Լավ է, մեծանալն էլ հրամանով ու ծրագրով չէ: Մեկից մինչև հինգ տարեկան, հետո էլ, երեխան ապրում է իր համար, իրեն հարմար, մարմինն էլ ընթացքում կրթվում է, մարմնակրթությունը վերածվում է մտածողության ու մշակույթի:

- հիգիենա
- անվտանգ, ճկուն, կառավարելի շարժումների մշակում ամենօրյա գործունեությամբ
- մարմնամարզություն՝ մարմնի, կազմության, կեցվածքի ձևավորում
- լող
- հեծանվավարություն
- մարզական գործիքներ

Ո՞Ր ԴԱՍԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԿԱՍ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԿՏԵՂԱՎՈՐՎԻ ՄԱՆԿԱՆ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Անվտանգություն. Ճկունություն, շարժումներ... միտք

Ով է չափել-որոշել, որ տեղում քայլքը կամ առավոտյան սովորական դարձած մարմնամարզությունն ավելի մարզական-կոփող-զարգացնող են, քան ծառ բարձրանալը կամ դրա փորձը, քարերի վրայով քարից քար թռչկոտելը, հեծանիվ քշելը, նույնիսկ [սեղանների վրայով քայլել-վազելը](#)...

Անվտանգ-հարմար-մտածված տեղաշարժ, սեփական շարժումների կառավարիչ-ռեժիսոր, էլ չեմ խոսում միջավայրի յուրացման մասին. սրանք մարմնակրթության խնդիրներ չե՞ն, հատկապես փոքրերի համար:

Լիովին անվտանգ միջավայր էլ չի լինում: Ավտանգությունը լինում է միջավայրի յուրացումով, շարժումների և մտքի ճկունությամբ:

Շարժումներն ուղղորդելու, հմտորեն շարժվելու կարողությունները երեխայի անվտանգության միջոցն են, մկաններն են զարգանում, մարմինը, միտքը...

Ժամանակ, ջանքեր և հետևողականություն են պետք. ամենօրյա -անկաշկանդ, անարգել ու անպարտադրանք, խաղ-վարժանք [հրական կյանքի միջոցով](#): Թելադրողն էլ երեխայի մարմինն է, նրա ներսում դեռ ապրող բնությունը, էներգիան...

Այսպիսի մի խաղ: Մի կետից (նստարանից, աթոռից, լվացարանից, ծառից...) մյուսը գնալ՝

- տարբեր ճանապարհներով

- ամենակարճ ճանապարհով
- ամենաերկար ճանապարհով:

Ամենակարճ ճանապարհից պետք է շեղվել՝ ինչ-որ բան բերելու, վերցնելու և հասնել վերջնակետ՝

- արագ
- դանդաղ
- թռչկոտելով:

Հորինել են Նոր դպրոցի սաները: Չեն հորինել, սկսել են խաղալ, և այսպես է ստացվել:

Մարզական-մարմնամարզական տարբեր վարժություններ, խաղեր, արգելքների հաղթահարում, ճամփորդություններ...

Շրջապատում ամեն ինչ կարող է մարզագործիք դառնալ: Ինքը՝ սանն է այդպես տեսնում-վերաբերվում (իհարկե առանց տերմին-ձևակերպումների). եթե չբարձրանա, չթռչի աստիճաններով (այ լավ միջոց), չքայլի բազմոցի թիկնակի վրայով, չմտնի-չտղա սեղան-[աթոռների տակով](#), ինչպե՞ս կարող է ճարպիկ-ձկուն-մարզված լինել, պաշտպանված-անվտանգ լինել:

Վերնագիրն էլ՝ [Ճարպկամարզություն](#):

Կամ էլ՝ [բակում](#)...

Կամ՝ [Կոնֆետ ուտելու համար պետք է կարճ ճանապարհը գտնել](#):

Իսկ մենք արգելում ենք, չէ՞, ոնց որ մեր բան ու գործը դա է և ոչ մարզանստարան, մարզապատեր, մարզապարկեր, մարզաինչկուզեք ավելացնելը:

Բա որ երգ-պարն ու խաղը հանկարծ բաժանվեին մարմնից, շարժումից... տխուր կլիներ:

Դրանք միասին են, մասնագետները կասեն՝ ինտեգրված-միջառարկայական...

Հ. Թումանյանի «Ծաղիկները» կարելի և [մի քիչ մարզական դարձնել](#), կամ լիովին մարզական: [«Խաղչա-հուղչա»-ն էլ պակաս մարզական չէ](#):

Ո՞ր մանկական խաղը մարմինը կրթելու միջոց չէ: Բա մեծերն էլ՝ ով ասես՝ դաստիարակ, օգնական, ծնող... չմանկանա՞ն... չե՞ն երագո՞ւմ, նույնիսկ՝ թաքուն:

Օրվա մասը տարբեր ձանձրալի պարապմունքների ու չգիտես ինչի վրա կորցնելու փոխարեն, խաղում են՝ իրենց հետ իրենց հորինած-առաջարկած, մեծերի համար անսպասելի խաղեր:

Այ լավ առավոտյան մարմնամարզություն՝ [ին մացած երգ ու խաղով, ոտանավորով: Օրվա կեսին կամ վերջում էլ կլինի...](#) (Հիշո՞ւմ եք «Ծաղիկները»):

Կրթահամալիրի շրջանավարտները գուցե չեն էլ մտածել, որ իրենց նվերը նաև այսպես կօգտագործեն, բայց գեղարվեստի ընկեր Բուրիկն ու իր ընկերները լավ [գիտեն իրենց գործը](#):

Ամեն ինչ պարզ է, հետաքրքիր, սիրելի... միայն կամք է պետք, հետաքրքիր միտք, միջավայրը ճիշտ կազմակերպելու ձգտում, սաներին լսել-վստահել-հասկանալ...

<http://partez.mskh.am/?p=6024>

Այսպես, անվերջ է մարչոքս կամ հինգ տարեկանը, խաղալիքն էլ իր մարմինն է: Գնդա՞կ կա... բա՞ն կա...

«ՇՐԽԿԱՆ» ՀԱՄՈՒՅԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Դասավար-դաստիարակների զարգացման, վերապատրաստման, ինքնադաստիարակման միջավայր

Նախակրթարանի սաների զարգացման կազմակերպման ձև

«Շրխկանը» «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նախադպրոցական կրթության դաստիարակներ-դասավարների մասնագիտական զարգացման երաժշտական գործունեության միջավայրն է: Կարելի է տեսական երկար-բարակ տեքստեր գրել, գիտական-մանկավարժական տեսություններ զարգացնել, կարդալ, քննարկել... ինչ կուզեք: Բայց գործը գործով է գործ դառնում, փորձով է զարգանում: «Շրխկան»-ով կարևորում ենք երկու բան՝

- դասավանդողի վերապատրաստում-ինքնակրթություն հենց իր գործունեության միջոցով ու արդյունքում.
- սաների ամբողջական (անառարկայական) գործունեության կազմակերպիչ դաստիարակի պատրաստում:

Դասավանդողի վերապատրաստման սեմինարը լաբորատորիա է, որտեղ ինքը՝ դասավանդողն է կատարողը, դիտող-դիտարկողը, արդյունք ստեղծողը, քննարկողը, կիրառողը, ներկայացնողը: Եղավ [«Շրխկան»](#) համույթ-լաբորատորիա: Համույթ-լաբորատորիա-փորձարան: Բացի այն, որ պարզապես սիրելի է շատերիս... Թեև սիրես-չսիրես, մեկ է, այստեղ երեխա ես դառնում, [դառնում ես ազատ ու անկանխատեսելի](#): Մա մե՛ծ խաղ է, որ խաղում են մեծերը, հետո իրենց ներսի խաղով գնում են խումբ կամ դասարան ու շարունակում խաղը փոքրերի հետ: Մեծ խաղը մեկն է, որ ամեն մեկն ի՛ր ձևով է խաղում, այստեղ խաղում են խմբով, խմբի հետ: Մեկ-մեկ էլ մենակ... ինչպես կուզի: [Մա էլ եղավ «Շրխկան»-ը դասարանում կամ խմբում:](#)

«Շրխկան»-ը՝

- երաժշտական համույթ է
- դասավանդողների միջոցով, մասնակցությամբ դասավանդողների վերապատրաստման լաբորատորիա է
- գործունեության միջավայր է, որտեղ կրթական ծրագիր է մշակվում, իրականացվում
- ... մեթոդական լաբորատորիա, որտեղ շատ բան մանկավարի է արվում:

Թե չէ ի՛նչ ծրագիր մանուկների համար:

Սեպտեմբերից մայիս [«Շրխկան»](#)-ը պատրաստել է 6 ամբողջական համար, որից մեկը Կոմիտասի մշակած 8 պարերից մեկն է: Որպես երաժշտական գործիք օգտագործում է շրխկացող, ծնագացող-ձևագացող, չիչխկացող ցանկացած առարկա՝ փայտ, քար, երաժշտական գործիքներ, մանկական խաղալիքներ... Բնաձայնություն, ծափեր, դոփեր:

Պատրաստի համարը խաղով է, երգով, խոսքով... ինչով խելքներս փչի կամ ինչը ինչի [հետ կապվեց](#):
[«Շրխկան»-ը](#) պատրաստվում է Համբարձման ծեսին: Շա՛տ ենք ուզում, որ մերօրյա լինի, իրական, խաղերի շարան:
Հայաստանում դժվար թե գտնվի նման ոճով, ժանրով, մեթոդներով արտահայատչամիջոցներով ներկայացող համույթ՝ 2-60 տարեկան մասնակիցներով:

Դաստիարակը մասնակից և սեմինարավար

Դասավանդողների միջոցով, մասնակցությամբ դասավանդողների վերապատրաստման լաբորատորիա է, համագործակցություն, փորձը, հմտությունը, շնորհը տալու-առնելու, փոխանցելու լաբորատորիա, ունակությունների ցուցադրման և զարգացման միջավայր: Դաստիարակները ծրագրի համատեղ մշակողներ և իրականացնողներ են:
Համագործակցող, համախոհ գործընկերների խումբ, սրանից լավ թի՞մ... [Սրանից լավ համույթ-լաբորատորիա](#): Համույթ-լաբորատորիան հստակեցնում է իր գործունեության խնդիրները, ընտրում է ստեղծագործությունը կամ ստեղծագործությունները, մշակում՝ դարձնելով այն ելույթի և ուսումնական նյութ:

Թարս ու շիտակ

Դե թող դաստիարակները հորինեն, խաղան, օգտագործեն իրենց փորձը, լսեն ընկերներին, ներկայացնեն իրենց արածն ու չարածը, թող խոսեն ստացվածի ու չստացվածի մասին: Կենդանի, իրական քննարկում՝ փորձով ու անփորձությամբ: Բոլորն իրար լրացնելով, առաջարկները զարգացնելով ավելի ունակ են դառնում, ավելի ազատ ու ստեղծագործ, մեթոդապես ավելի հմուտ:
Ուսումնական նյութը սովորելիս, բեմադրելիս, խաղալիս նրանք հենց տեղում, հանպատրաստից խաղ են հորինում, [իմացած խաղերն են օգտագործում](#), անհրաժեշտության դեպքում [միացնում-ձևափոխում են](#):

Հաճախ խաղը գալիս է խմբից, սաներից:

Լինում է, որ խոսքը, գործը կիսատ են մնում, հնարք են գտել, բայց ժամանակ չկա, որ մի լավ (մշակել բառը չի կայչում) տան ու առնեն: Փառք մեղիային: Մեկ էլ շատ ուշ ժամի Ինգան գրում է.

- Երեխեք, գտել եմ, եկեք քարկտիկ խաղանք:

Նելին էլ, թե՛

- Խաղի նկարահանումն ինձ վրա:

[Երկու օր հետո քարկտիկը հայտնվում է կայքում](#):

Քարկտիկ էր, թե պնդուկակտիկ, կարևոր չէ, կարևորն այն է, որ սաներն էլ սկսեցին խաղալ. Մի քիչ հաջող, մի քիչ անհաջող:

Բա շուտասելուկնե՛րը... Էլի այդ աննամուս ժամանակը չհերիքեց, ու մեղիայի «գրույցներից գլխի ընկանք», որ շուտասելուկ է պետք: Ով հուշեց, ով է հիշում: Ու

դպրոց-պարտեզը լցվեց շուտասելուկներով՝ հին ու նոր հորինած, դրանք էլ միացան խաղին, երգին:

Խաղալաբորատորիա... Համույթի մասնակիցները աշխատում են՝ հաշվի առնելով իրենց սաների կարողությունները, ունեցած հմտությունները, նկատի են ունենում նրանց զարգացումը, տարիքային առանձնահատկությունները, խումբ-դասարանի յուրահատկությունները. ինչ է տանելու իր հետ դպրոց-պարտեզ...

Կարող է նույնիսկ նորաստեղծ խաղ-պարն էլ հետո խումբ-դասարան չգնալ, մեկ է, դաստիարակի մեջ զարթնած մանկությունն հաստատ գնում է: Ձեռք բերած փորձն ու հմտությունը, մտածողությունը, ներքին զգացողությունները խմբում լուսավոր, ստեղծագործական, զվարճալի, հրճվալի միջավայր են դառնում:

Մարդը վարժվում է համագործակցելուն, կենտրոնում չլինելուն, խմբով աշխատելուն, խմբի անդամներից մեկը լինելուն:

ՀԱՄՈՒՅԹԸ ԻՆՔՆԱԴՐՄԵՈՐՄԱՆ, ԻՆՔՆԱԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ՁԵ՞ՐՍՈՒՄԸ

Անտաղանդ մարդ չկա, չէ՞: Տաղանդներն են տարբեր: Մեկ էլ տեղ է պետք տաղանդդ ցույց տալու:

Արտիստ դաստիարակ: Ամեն մեկն իր շնորհն է դրսևորում, փնտրում-գտնում ի՛ր անելիքը: Ասվածն անկարևոր չհամարեք: Գուցե ամենակարևորն է:

Չկայացած, չդրսևորված մարդ, այն էլ՝ դաստիարակ: Պատկերացնում եք, չէ՞:

Համույթի առաջին և վերջին պարապմունքներից երևում է [խմբի ակտիվության](#)

[զարգացումը](#): Սկզբում թելադրողը, որոշողները երաժիշտներն էին: Բայց դե դաստիարակը դաստիարակ չի, եթե պասիվ կատարող է: Հայտնագործելու հրճվանք, ստեղծագործելու վայելք... մարդիկ ասելիք ու անելիք ունեն, որոնք գնալով ավելի հստակ ու սիրելի են դառնում:

Բերված օրինակներում ներառված է սաների գործունեության մի քանի ձև, որոնց նախագծերը և իրականացումը կապ ունեն համույթ-լաբորատորիայի հետ:

Էլ ինչ սովորական, ի՛նչ կրկնություն, ի՛նչ հնացած:

[Խաղը դառնում է ընդհանուր ու գալիս Մարմարյա սրահ:](#)

Շրիսկո՛ ց, տզո՛ ց, բզո՛ ց...

Փորձ, նոր բան հորինելու-բստրելու ունակության ձևավորում-զարգացում: Առանց [սրալի](#) [խումբ կամ դասարան մտնելու իրավունքը կամ անհրաժեշտությունը ո՞րն է](#): Թե՞ թվում է՝ ունեցածը բավական է, զարագացնելը ավելորդ:

Եթե դու չես խաղում, ո՛նց ես խաղացնելու: Եթե մեջդ ամուր քնած է մանկությունը, ինչ ես անելու մանկան հետ. ձանձրալի պարապմունք՝ սեղանի կողքի աթոռին գամված:

Խումբ-համույթը սովորում է պատուհանից մտնել:

Դպրոց-պարտեզը համույթ-լաբորատորիա

«Շրիսկան»-ի էլույթներում, սաների գործունեության ժամանակ՝ միանում են խոսքը, խաղը, երաժշտությունը, շարժումը, գործիքը, մարմինը, անգամ գիրն ու նկարը. երգին հասնելու, երգի տարածման կոմիտասյան սկզբունք: Մաներն իրենց ներքին ռիթմով, զգացողությամբ մարմնի իրական շարժումով դառնում են պարող-պարի ստեղծող: Մեծական պարն հետո է գալու՝ թեթև, աննկատ: Ռիթմ- երգ- հարմոնիա: «Տանողը»

սաներն են դաստիարակի հետ:

Խմբերում, դասարաններում եղած շրիկաններին ավելացել են նորերը, դարձել բազմազան, շրիկանը դարձել է առօրյա, ամենօրյա. լուրջ բաները՝ ծափ-ծնկոցով: Ամբողջական խաղ ... [ճանաթ երգն են երգում ու խաղում](#), մեկ էլ ... մարզանքը վերածվեց խոսքի:

Խումբը փորձում է չկրկնել արդեն եղածը, արածը, երգին ուղեկցող պարզունակ շարժումները, փորձում է երգն ու խոսքը ավելի ակտիվ, շարժուն, բազմազույն դարձնել: Երգը երբեմն ռիթմիկ արտասանություն է դառնում, երբեմն՝ որոշ հատվածներ միայն շարժումով են ներկայացվում:

Մա նաև ճանապարհ է դեպի ծես: Ինչ ճանապարհ. իսկական ծես է, նոր, թարմ, կենդանի՝ ծեսի ծես:

Շրիկն՝ ց, տզոն՝ ց, բզոն՝ ց...

Էլ ինչ է պետք 2-6 տարեկանին...

«ԻՄԱՑՈՒՄԻ ՀՐՃՎԱՆՔ» ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

«Իմացումի հրճվանք» ծրագիրը (այսուհետ Ծրագիր) կրթահամալիրում իրականացվող [«Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեղիակրթություն»](#) պետական այլընտրանքային ծրագրի բաղկացուցիչն է:

«Իմացումի հրճվանք» ծրագիրն ապահովում է պետական կրթական չափորոշիչի՝ կրտսեր դպրոցին ներկայացվող պահանջները, սովորողի անհատական կրթության իրավունքը, կրթության անընդհատությունը, աշխատանքի, փորձի, հետազոտման միջոցով սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, գիտելիքի ձևավորում:

Ծրագիրն իրականացվում է համապատասխան միջավայրում: Կրթության պատվիրատուն նաև ծնողն է. նա ընտրում է ծրագիրը և որպես պատվիրատու-գործընկեր՝ մասնակցում կրթության կազմակերպմանը:

Ծրագրի խնդիրների իրագործման, սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման համար ձևակերպվում և ապահովվում են.

- Ծրագրի իրականացման միջավայրը.
- Ծրագրի իրականացման սկզբունքները.
- Ծրագրի իրականացման ձևեր և միջոցները:

Ծրագրի իրականացման միջավայրը

Ուսուցում կյանքով և կյանքի համար:

Կազմակերպված ուսումնական միջավայրի ապահովողը դպրոցն է, որպես կրթություն կազմակերպող հաստատություն, ծնողը՝ որպես իր երեխայի ուսման կազմակերպման պատվիրատու և պատասխանատու, որպես դպրոցի գործընկեր, համախոհ, դասվարը՝ որպես դասարանում իրականացվող ծրագրի ղեկավար:

Ուսումնական կազմակերպված միջավայրը դպրոցական շենքն է՝ իր ուսումնական կաբինետներով, լաբորատորիաներով, արհեստանոցներով, բակ-պարտեզներով,

լողավազանով, ջերմոցով, կից հրապարակներով... Այստեղ ոչինչ ավելորդ չէ, ամեն ինչ կարող է ուսումնական նյութ կամ այդ նյութի առարկա (օբյեկտ) դառնալ: Դա այն միջավայրն է, որտեղ սովորողն ապրում է, որը բավարարում է նրա հետաքրքրությունները, անհատական զարգացումը, ապահովում է նրա բնականոն զարգացումը, կենսական պահանջները: Սա չի նշանակում, որ անտեսվում են սովորողի տունն ու բակը, քաղաքի հրապարակն ու այգին, ճանապարհն ու... ամեն ինչը, որ շրջապատում է մարդուն, հետաքրքրում է նրան:

Դասասենյակ-տեխնոլոգիական լաբորատորիա (դասարան)

Ընդարձակ տարածք է, որտեղ ամեն ինչ հարմարեցված է սաների անվտանգ և ինքնուրույն գործունեությանը:

Դասասենյակը զարգացնող, բազմաբնույթ խաղ-գործունեության, տեխնոլոգիական ուսուցման իրականացման լաբորատորիա է՝ սանհանգույցով, համապատասխան գույքով, ուսուցման միջոցներով:

Ուսումնական միջավայրի կաղապարված պատկերացումը՝ գրատախտակ, սեղան-նստարան, առանձնապես կապ չունի կրտսեր դպրոցի սովորողի ֆիզիկական և ֆիզիոլոգիական տվյալների, առանձնահատկությունների, գործունեության իրականացման հարմարավետության հետ: Մեր դասասենյակ - լաբորատորիայի միջավայրը հարմար է սովորողի ֆիզիկական տվյալներին. կահույքը թեթև է, դյուրաշարժ, հարմարավետ:

Սովորողը հնարավորություն ունի գորգին նստելու, հարմար տեղավորվելու՝ կարդալու կամ այլ աշխատանքով զբաղվելու համար: Սեղան-աթոռներն օգտագործվում են անհրաժեշտության դեպքում, երբ հենց դրանց կարիքը կլինի:

Դասասենյակն ապահովված է տեխնոլոգիական կրթության կազմակերպմանն անհրաժեշտ միջոցներով և պայմաններով.

- թվային միջոցներ՝ էլեկտրոնային գրատախտակ, անլար համացանցային կապ, ուսումնական գործունեությունն ապահովող անհրաժեշտ ծրագրերով ապահովված համակարգիչ, ֆոտոխցիկ-տեսախցիկ, ձայնագրիչ, ականջակալներ, տպիչ, սքաներ, սքայֆ.
- ուսումնական-աշխատանքային գործիքներ, այլ պարագաներ և միջոցներ՝ շիրմա, ներկեր, վրձիններ, տարբեր որակի և չափի թղթեր, մոտավորապես 1x1,5 չափի հայելիներ, տարբեր չափի տարաներ, խոշորացույց, մանրադիտակ, տարբեր մեծություններ չափող պարզագույն գործիքներ, կշռաքարեր, ավազի ժամացույց, ջերմաչափներ, թաթավոր կշեռք, մագնիսներ, հասակաչափ, անհատական թաղարներ, տարբեր չափերի գյուղատնտեսական գործիքներ, ջեռոց, ջրատաքացուցիչ.
- խաղեր ու խաղային պարագաներ՝ շախմատ, սեղանի այլ խաղեր, կառուցողական խաղեր, երկրաչափական պատկերների հավաքածուներ, դոմինոներ, էլեկտրոնային-ուսուցողական խաղեր, լոտոներ, խաղաթղթերի կապուկներ, տարբեր չափերի գնդակներ, ցատկապարաններ, բուլավաներ.
- թատերական-երաժշտական գործունեության հնարավորություն՝ շիրմա, դասվարի ու սովորողների ձեռքով պատրաստած տիկնիկներ, դիմակներ, ծիսական պարագաներ, փոքրիկ հանդերձապահարան, պարզ-խաղային

երաժշտական գործիքներ (շրիկաններ, մետալաֆոն, շվիներ, դափեր, զանգեր...), համապատասխան ընթերցարան.

- հարմար հանդերձարան, պահարաններ նոթբուք-նոթբուքերի, անձնական իրերի համար:

Կա կից սանհանգույց՝ լվացարանով, մշտական ջրով, հայելիով, հիգիենայի պարագաներով (թղթե մեկանգամյա օգտագործման սրբիչ, լվացվելու պարագաներ, մաքրելու միջոցներ, բաժակներ) առաջին բուժօգնության արկղիկով կամ փակ դարակով: Սանհանգույցը հասանելի է բոլորին, կահավորանքի չափերը սովորողներին համապատասխան են: Սա էլ է կրթության միջոց, որովհետև կենցաղային միջավայրի մշակումն ու կենցաղային կուլտուրան պակաս կարևոր չեն: Սովորողների ֆիզիկական զարգացումն ապահովող պայմաններ՝ շվեյցարական պատ, մարզական ներքնակներ կամ գորգեր՝ փափուկ հատակ կամ այն հավաքելու հնարավորություն:

Կից սենյակ կամ առանձնացված տարածքը (7-10 քառ/մ) ծառայում է ուսուցչի, սովորողի կամ սովորողների առանձին խմբի անհատական աշխատանքի և հանգստի կազմակերպմանը: Սենյակում՝ աշխատանքային հարմար կահույք, համակարգիչ, ձայնագրիչ, 2-3 ականջակալ, ուսումնական գործիքներ դնելու հարմար պահարան, բազկաթոռ կամ բազմոց:

Այստեղ ուսուցիչն աշխատում է, զբաղվում ինքնակրթությամբ, կազմակերպում իր և սաների կարճատև հանգիստը, հանդիպում ծնողի հետ, քննարկումներ կազմակերպում գործընկերոջ կամ մասնագետի հետ: Սովորողը կամ խումբը առանձնանում է աշխատելու, իրար ՏՏՏ հմտություններ փոխանցելու, համացանցում նյութ փնտրելու, հանգստանալու նպատակներով:

Ուսումնական միջավայր է նաև դասարանին կից սրահը՝ միջանցքը: Այստեղ սովորողները կենդանիներ և բույսեր են խնամում, նկարում են, խաղում:

Դպրոցական շենքն ապահովված է սաների ֆիզիկական ակտիվությունն ու զարգացումն ապահովող պայմաններով և միջոցներով՝ **մարզադահլիճ**՝ շվեդական պատով, մարզական գույքով, մարզական լողավազան՝ լողարանով:

Ջերմոցի տարածք-տնկարանը՝ շենքի ներսում և դրսում, բնագիտական գործնական լաբորատորիա է: Դրան լրացնում է կենդանիներ (թռչուններ, ձկներ, կրիա և այլն) պահելու-խնամելու հնարավորությունը:

Ուսումնական-հետազոտական աշխատանքների, բնագիտական փորձերի, տեխնոլոգիական տարբեր աշխատանքների լաբորատորիայում բնագիտական-տեխնոլոգիական գործունեությամբ զբաղվելու պայմաններ և գործիքներ կան՝ չափման գործիքներ, թաղար-տնկարաններ՝ սերմեր ցանելու, տնկիներ ստանալու համար, գյուղատնտեսական գործիքներ, աքվարիում, կենդանիներ, ծեփի-կերպարվեստի արվեստանոց՝ հարմար պահարաններով, չարխով, ծեփի և նկարելու գործիքների հավաքածուով:

Կա թատրոն-արվեստանոց՝ բեմով, լուսարձակներով, բարձարախոսներով, միկրոֆոնով, հեշտ ձևափոխվող և տեղափոխվող շիրմաներով, հայելիներով, մեծ գորգով, էլեկտրոնային գրատախտակով, համակարգիչով, հանդերձարանով: Բուժկետ-լաբորատորիա, որտեղ սաները կարող են ուսումնական համապատասխան պարապմունքներ անցկացնել, դիտարկումներ, չափումներ կատարել: Խոհանոց-լաբորատորիան սովորողների համար սիրելի մի տարածք է, որտեղ ինքնադրսևորվելու, փորձեր, խոհարարական-տեխնոլոգիական աշխատանքներ կատարելու հարուստ կենցաղային տեխնիկա կա՝ ջեռոց, սառնարան, հոսող ջուր, ջրատաքացուցիչ, հարիչներ, տարատեսակ սպասք, պահարաններ, կտրիչներ, կշեռք և այլն:

Բակ-պարտեզը մշակում և խնամում են սովորողները:

Սովորողն իր միջավայրի պարտիզանն է:

Ծառ ու ծաղկով, կանաչ, բուսականության տարբեր տեսակներով հարուստ պարտեզ:

Բակ-պարտեզն ապահովված է ոռոգման ջրով և խմելու ջրով, փակ աղբամաններով, անհրաժեշտ աշխատանքային գործիքներով: Մեծերի կողքին, մեծերի հետ իր այգին ստեղծելով՝ սովորողը դառնում է իր կյանքի պատասխանատուն:

Բնագիտական գործունեությունն այս պայմաններում աշխարհաճանաչողական է:

Բակ-պարտեզում սովորողը դիտարկումներ է կատարում, հետազոտական աշխատանքներ՝ սկսած բույսի աճի դիտարկումից, ծառ տնկելու և պատվաստելու աշխատանքներից մինչև տերևի ու բողբոջի մանրադիտակային ուսումնասիրություն, էկոլոգիական, բնապահպանական, կանաչապատման նախագծերի իրականացում:

Բակ-պարտեզի գրավիչ աշխատանքային մասը տնկարանն է, որտեղ, ինչպես և պարտեզում, տարբեր բույսեր են աճեցնում, թաղարներ ստեղծում, հետո օգտագործում են տարբեր հասարակական նախագծեր իրականացնելիս, շրջակա միջավայրը ավելի կանաչ ու գրավիչ դարձնելու, իրենց ստեղծածը տարածելու, նվիրելու և այլ նպատակներով: Տնկարանն էլ, որպես ամողջական կրթական միջավայրի բաղկացուցիչ, կենդանի լաբորատորիա է, սովորողների բնագիտական գործունեության տարածք:

Սովորողը բակ-պարտեզում ինքնամարզվող, խաղացող, ֆիզիկապես զարգացող է՝ ճկուն, առողջ, արագաշարժ, արագ կողմնորոշվող:

Բակ-պարտեզում կան սովորողի ֆիզիկական ակտիվությունն ապահովող պայմաններ՝ մարզահրապարակ-հեծանվահրապարակ-խաղահրապարակ, որը ձմռանը որպես սահաղաշտ կձառայի, ճեմուղի-վազքուղիներ, ամռանը՝ ամառային լողափ՝ բաց լողավազանով, ցնցուղով, հիգիենիկ պարագաներով, հովանոցներով, ամառային գործունեության տարբեր միջոցներով՝ տարբեր չափերի պլաստիկ ամաններ, գործիքներ, մանր ավազ, տարբեր գլաքարեր, հեծանիվներ, գնդակներ, ձգելու պարան, ցատկապարաններ, մարզական թունելներ, բուլավաներ, վազարգելքներ, ձոճքեր, ձոճանակներ, սահարաններ:

Ազատ գործունեության, գործունեության ընտրության ազատության և համապատասխան միջավայրի գոյության պայմաններում սովորողների ֆիզիկական

գարգացումը չի սահմանափակվի շաբաթական 2 ժամով, ամեն օր, ցանկացած հարմար պահի նրանք կարող են զբաղվել ֆիզկուլտուրայով, մարզվել, խաղալ, և նրանց ֆիզիկական զարգացումը բնական և անընդհատ կլինի:

Սովորողը բակ-պարտեզում ստեղծող և ստեղծագործող է: Կան դրա հնարավորության պայմանները՝ ավագ՝ մանր և խոշոր, խիճ, գլաքարեր, կավով այլ նյութերով աշխատելու հնարավորություն, փուչիկներ, սպունգ, ներկեր, տարբեր չափերի տարաներ, չափման գործիքներ:

Ծրագրի իրականացման համար ծրագրի մասնակիցներն օգտվում են կրթահամալիրում ստեղծված այլ պայմաններից:

Մեղիակենտրոնում՝

Քննարկման սրահ

Աստղացուցարան

Մեղիադահլիճ-կինոսրահ

ՏՀՏ միջոցներ և գործիքներ, անլար համցանց

Մեղիաընթերցան

Մայր դպրոցում՝

«Տիգրան Հայրապետյան» գրադարան և ստեղծված-համալրվող մեղիագրադարան

Մարզական ակումբներ

Մարմարյա սրահ

Խեցեգործական արվեստանոց

Թատերական մեղիադահլիճ

ՏԱՌԱՃԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ. ՈՉ ԹԵ ՆՊՏՏԱԿ, ԱՅԼ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻ ՄԻՋՈՑ

Հայ ձա՛յն, հայ հնչյո՛ւն, հայ տա՛ռ, հայ գի՛ր...

Տեսնես ո՞վ է հորինել:

Կար կամ եղել է ժամանակ, երբ տառաճանաչ մարդուն գրագետ են համարել, հարգել-ակնածել են: Էն է՛րբ էր:

Թվում է՝ շատ բան փոխվել է: Մտեք Երևանի ցանկացած դպրոցի առաջին դասարան և կտեսնեք, որ այնքան էլ շատ բան չի փոխվել:

5-6 տարեկանը «դպրոց է գնում»: Բոլոր մեծերը նրան մի լա՛վ «նախապատրաստել» են: Հարցրեք ցանկացած 5-6 տարեկանի, թե ինչու է դպրոց գնում: «Որ տառերը սովորեմ ու գերազանցիկ լինեմ»: Մի քանի բան էլ գիտի՛ պետք է լուռ նստել, լսել ուսուցչին, չվազվզել, չաղմկել, դասի ժամանակ չխոսել, մինչև անգամ զուգարան չգնալ...

Խե՛ղճ վեց տարեկան: Պատկերացրեք նրա վիճակը՝ «բանտից էլ խիստ է այս դպրոցը»: Բա որ ուսուցիչն էլ խիստ եղա՛վ: Վե՛րջ, կատարվեց շատ ծնողների երազանքը:

Դրած մի ամբողջ տարի տառ են սովորեցնում, կարծես ուրիշ բան ու գործ չունեն, դասավանդողի, ծնողի, տատ ու պապի, դպրոցի տնօրենի նպատակը իրենց սան-զավակներին այդ 39 նշանները հիշել տալն է: Իրականում այդ տառերը սովորողի համար մնում են անկենդան նշաններ: Բա որ մի տառ մոռանալու համար մի դմվոց էլ գլխին է ուտում, կամ տառը ծուռտիկ գրելու համար մի հաս էլ մայրը թաթիկին է խփում, էլ ի՞նչ է լինելու 5 կամ 6 տարեկանի վերաբերմունքը գրած տառի նկատմամբ, որն իրեն օտար է, նշան է, էլի:

Մի կողմ թողնենք վերամբարձ խոսքերը և նայենք իրականությանը: Ինչպես շատ բան, տառաճանաչությունն էլ կիսատ-պռատ, անհավես ենք անում:

Ի՞նչ մի դժվար բան է 39 նշան հիշելը՝ դրանք անընդհատ գործածելով: Կարելի է պարզապես ձեռի հետ անել: Խոսք, բառ, վանկ, ձայն, հնչյուն... Եթե անգամ դրեցինք հենց սանի հետ խոսքը բաժանեցինք հատվածների, հատվածը բառերի... մինչև հնչյուն: Ի՞նչ է տալու դա սանին, ո՞նց է այդ ամենը 5 տարեկանը յուրացնելու, զգալու: Զգալու:

Լեզվագագոթություն

Մենք տառուսուցումը բաժանել ենք առանձին մաս-ժամանակահատվածների իրենց խնդիրներով՝ նախալրբենական, ալրբենական, ետալրբենական: Մի տեսակ արհեստական չի՞ ստացվում, դրանով տառուսուցումը նպատակ չէ՞նք դարձրել. սկսած «տառուսուցում» անվանումից:

5 տարեկանում համարյա ամեն ինչ յուրացվում է զգացողության մակարդակում: Իսկ լեզվագագոթությունը լեզվին տիրապետելու, պատկերավոր մտածելու, բառն ու բանը տեղին, դիպուկ գործածելու, խոսքը հստակ, գրագետ կազմակերպելու գրավականն է: Այդ զգացողությունը ձևավորվում է ծնված օրից՝ լսած խոսքով, ձևավորված խոսքով, յուրացված խոսքով: Նշանակում է՝ երեխան ծանոթանում է, ճանաչում, յուրացնում է լեզվական բոլոր «միավորները», խաղալով զգում դրանք՝ խոսք, բառ, ձայն (հնչյուն): Իսկ տառը ո՞նց կբաժանես այս ամենից, եթե դրա կարիքը եղավ, ի՞նչ էս անելու, ասելու էս՝ սպասե՞ք: Ինչու տանն այդպես ենք անո՞ւմ: Ոչ: Այդ դեպքում ինչո՞ւ ենք դպրոցում արհեստական աստիճաններ ստեղծում-հորինում:

Մանր գործունեության ընթացքում խաղում է ձայնով՝ առավոտյան ծեսի «Ձայնախաղը», «Աղմուկից երաժշտություն» նախագիծը, «Շրխկան» համույթ-խումբ նախագիծը, «Ձայներ» ունկնդրման նախագիծը (կենդանիների, բնության, տիեզերքի, մարդկային հույզերի, տեխնածին):

Ամեն առավոտ, որպես ծիսական արարողություն, խաղում են ձայներով: Այսօր քամին է եկել դասարան: Ի՞նչ ձայներ է հանում քամին, երբ թույլ է փչում: Մի քիչ ուժեղացավ: Իսկ երբ քամին փոթորի՞կ է (իբր փոթորիկը գիտե՞ն):

Խաղում են «ա՛» կամ «սը՛ս»... ցածրից բարձր, բարձրից ցածր, ձայնը պահում են նույն բարձրության վրա, իջնում են մինչև շշուկ, մտքում են ասում... Առավոտյան ուրախ

խաղ, որ առիթ է հնչյունն արտասանելու, լսելու, գցել-բռնելու, տալ ու առնելու, ուղղել-հստակելու: Հնչյունը դարձավ իրենցը, որտեղ ուզում են՝ թող դնեն:

Խաղում է վանկերով: Օրվա ոտանավորն է սովորում՝ ռիթմով խաղալով՝ ծափերով, ոտքերը դռփելով, ծնկներին խփելով, այս ու այն կողմ ձգվելով, շրխկաններ շրխկացնելով ու հստակ վանկատելով:

*Մի ա -քա- դաղ կար-մրա-պե-ծիկ,
Իր ոտ-քե-րը եր-կար ու ձիգ...*

Ներկա-բացակայի թերթիկին իր նկարն է, կողքին իր անունն է մուտքագրված, ինքն էլ նշանով, գույնով, տառով, բառով, ինչով կուզեք, ամեն օր իր ներկան է նշում այդ թերթիկին, ամեն օր տեսնում է իր անվան տառերը, ամեն օր «ծանոթանում» է դրանց:

Եթե ամեն ինչ արվում է հետևողականորեն, տեղը տեղին, մի օր պարզվելու է՝ սանը բոլոր տառերը ճանաչում է: Իհարկե, կլինի սովորող, որը զուգահեռ կսկսի կարդալ, մեկն էլ քիչ ուշ կկարդա: Բայց բոլորը պատրաստ կլինեն ընթերցանությանը, որովհետև սանը այս գործունեությամբ ոչ միայն տառերը կճանաչի, այլև ձեռք կբերի ընթերցանության համար անհրաժեշտ հմտություններ:

Խաղում է բառով: Առավոտյան պարապմունքի բառախաղը՝ բառհորինուկ, [պարզ բառի բառիմաստի մեկնաբանում](#), բարդ բառի բառիմաստի մեկնաբանում, բառերի միացում, նոր բառերի հորինում: Նկարում է ցանկացած բառ՝ ծառ կամ ծիծաղ. տարբերություն չկա. ծ տառն է նկարում է կողքին: Տառակերպարներ է նկարում, տառթխիկ անում: Ամանորյա ծեսի բառաքսակը լցնում են բարի, ուրախ և կարևոր բառերով, այն բառերով, որոնք պիտի դառնան 2015թ բառերը. օրը՝ մի բառ: Եթե արտահայտություն, բառակապակցություն՝ ավելի լավ:

Եթե միտք-ցանկություն-մաղթանք՝ հրաշալի է: Բացում են էլեկտրոնային թղթապանակ և մինչև ամանոր լցնում: Հետո կկարդան այդ բառերը՝ որպես նվեր-մաղթանք:

Խաղում է մտքով: Միտք, վերաբերմունք ընտրած առարկայի, երևույթի, իրադարձության վերաբերյալ, տարբեր դատողություններ, կարծիքներ...

TV5-ն ու Ռադիո5-ն էլ խոսքը կառուցելու, անգամ տարբեր ոճեր գործածելու միջոց: Տոներ, ծեսեր, տարբեր ծրագրեր:

Ոչ թե արհեստական բաժանումներ է անում, այլ արտասանում է, արտահայտվում, լսում, արտաբերում, երգում, ռիթմի մեջ է դնում:

*Ծուղրուղո՛ւ,
Աքլորը զիլ կանչեց թառին...*

Հրաշալի է, որ կա «[Պարտեզ](#)» ամսագիր, որը [Մեդիաընթերցարան](#), [Չայնադարան \(Երզարան. Հերաիթասաց, բանահավա\)](#), [Խաղադարան](#) բաժիններ ունի: Ինչպես են

սաները խաղում գրական ստեղծագործություններով, պատմելը դժվար է, [դիտելը՝ հեշտ](#): Մանավանդ որ այդ ստեղծագործությունների բնագրերը ևս տեղադրված են ընթերցարանում՝ Թումանյան, Աղայան, Խնկոյան, Կոմիտաս, Ռոդարի, Բիսեթ, անգլիական մանկագրություն, բանահյուսություն:

Պատմում են, շատ են պատմում [իրենց արածի ու չարածի մասին](#): Ինֆորմացիա է հավաքում, [հարցազրույց է վարում](#):

Գործունեության ընթացքում, գործունեության արդյունքում սանը կենդանացնում է իր գործածած լեզուն: [Կենդանացնում է, շունչ է տալիս](#):

Միայն թե հերթական անգամ ասվածը չտանք վերամբարձ եթերին ու շարունակենք տառուսուցումը: Այսպես, կամաց-կամաց ձևավորվում է սաների լեզվացման գործընթացը: Ոչ թե չոր ու ցամաք տերմին հասկացություններով և ձևակերպումներով, ոչ թե պարտադրված տառուսուցմամբ, այլ՝ գործածելով, զարգացնելով մտածողությունն ու պատկերացումները: Տառաձանաչությունն էլ այդ միջոցներից մեկն է, որ իրականանում է լեզվական նույն օրենքներով:

Տառաձանաչումը ինքնաբույս, գործնական-կիրառական գործընթաց է: Շատ երեխաներ մինչև դպրոց գնալն արդեն տառաձանաչ են լինում: Ինչպե՞ս: Ճանապարհին մշտապես հանդիպող ցուցանակները մեծերի հետ կարդալով, խաղալիքներով, ծանոթ ոտանավորները անընդհատ «կարդալով» իր հետաքրքրություններն ու պահանջները բավարարելով: Ուրեմն՝ տառաձանաչության դյուրին ձևը սովորողի համար հետաքրքրությունները բավարարելով, անհրաժեշտության դեպքում իմացածը կիրառելով սովորելն է:

ԼԻՔԸ ՈՒՐԱԽ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Կարմրաթուշ լավաշ է թխում՝ ուրախ մոռոթով, որ հյուրասիրի ընկերներին, հարազատներին, հյուրերին: Ուզում է լավաշ բառն էլ գրի, չգրի՝ Թող մուտքագրի, նկարի, ուրախ այբբենարանի էջ ստեղծի: Կհավաքվեն էջերը և կդառնա ուրախ այբբենարան, իր սանի ստեղծած-հորինած այբբենարան: Ով է ասել, որ այբբենարանը մեկը պիտի լինի: Պատկերացնում եք՝ քանի այբբենարան, քանի գույն, բառ, միտք: Գումարեք երգն ու երաժշտությունն էլ, և կստացվի համերգ-այբբենարան:

Մարդը սովորաբար ինչ- որ բան սովորում է, եթե դրա կարիքն ունի և սովորում է գործածելով: Համակարգիչ, տառաբառապարան, որին կախված են սաների ստեղծած տառեջերն ու բառեջերը, տառանկարներն ու տառադիմակները: Այ քեզ ուրախ տառաձանաչություն: «Աշուն», «լավաշ», «թթու» ու էլի էջեր: Բա իրենց, ընկերների, հարազատների անունները, բա մայրիկի անունը... Չգրի՞, ինչ է թե մի կամ երկու տառ դեռ չի անցել: Է, թող հենց այդ պահին հենց այդ սանն էլ ինքնուրույն «անցնի»: Ծանոթանում են, ճանաչում, զգում: Մեկ է, հետո պետք է գալու:

- [Սա մի այբբենարան](#)

- [Տեսն՞լ եք՝ միրոպեանոց այբբենարան, տեսեք](#)
- [Կամ երգող այբբենարան](#)
- [Իսկ էս Խխունց այբբենարանը](#)
- [Բա ռոդարիական թվարանադարաննե՛րը.](#)

Դե, ասեք՝ հեգում կա, խոսք կա, թվաբանություն կա, ստեղծագործում կա, մեր ասած մտքով խաղը կա, [չորս իսկական այբբենաթվաբանադարան](#):

Դե, հիմա համեմատեք այս հրաշալի, իրոք մանկական, իրոք ուրախ, իրոք զվարճալի, երաժշտական այբբենարանները այն միակ-անկրկնելիի հետ՝ տխուր, ծերացած, հաստափոր, անկենդան... այբբենարանի հետ. Ինչ կապ ունի հեղինակը տառաճանաչության հետ, երեխաների հետ, մանկական երևակայության, ստեղծականության հետ: Գույն չկա, խաղ չկա, զգացողություն չկա: Մտածում ես՝ բա ի՞նչ կա:

ՏԱՌՈՒՍՈՒՑՈՒՄ. ՈՉ ԹԵՆՊՍԱԿ, ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Տխուր, անկենդան, օտար տառեր, որոնք գրելու համար այնքան ջանք ենք թափում, տրամադրություն ու առողջություն փչացնում: Հետո ասում ենք՝ գրել չեն սիրում: Է՛, ոնց սիրեն, երբ այդ գիր ասվածն այդքան տհաճ բան է, երբ դրա համար մայրն ու հայրը ամենաքիչը օտար են դառնում: Իրեն սիրելի աշխարհն էլ, որտեղ ամեն ինչ այնքան լավ էր, հանկարծ անծանոթ, անընկալելի է դառնում:

Երեխան, ըմբոստանա թե չէ, մեկ է, ստիպված է կատարել մեծերի պահանջը: Նա զրկված է սխալվելու, իր սխալին անդրադառնալու, հասկանալու, ուղղելու հնարավորությունից ասեմ, հաճույքից թե իրավունքից:

Երեխայի կյանքից կորած 3 տարի. Նոր դպրոցի ծնողի թարմ պատումից:

Մեր ընկերը երեխային տարել է ինչ-որ քոլեջ, որտեղ ձանձրալի-տանջալի գործընթացը՝ մասնիկներ գրելը, բավականին երկար է տևել: Տեղափոխել է պետական մանկապարտեզի նախադպրոցական խումբ՝ նույն ձանձրալի-տանջալի պատմությունը: Հաջորդ տարի երեխան ընդունվում է դպրոց՝ առաջին դասարան, տաղտկալի-տանջալի պատմություն... Մեկնաբանություններն ավելորդ են:

Փոխարենը՝ շարունակվող այս խաղ-աշխատանքը. ով է ասել, որ գիծը գիր չէ. վաղը լիքը շրջաններ կնկարեն, մյուս օրը՝ ուղղանկյուն կամ այլ պատկեր... կհասնեն տառ-գրին, կպատմեն կլոր կամ քառակուսի պատմություններ:

Ամեն ինչ ավելի պարզ է, դյուրին ու հաճելի: Ինչո՞ւ ենք պնդում, որ տառերը պետք է սովորել հենց առաջին դասարանում, հինգ, տասը կամ չգիտեմ քանի ամսում: Մեկ է, ամեն երեխա յուրովի է սովորում, իր ներքին ժամացույցն ունի, իր մտավոր կարողությունները: Ինչի համար է այս համահավասարեցումը:

3 տարեկանը կարողանում է տկտկացնել համակարգչի ստեղնաշարը: Թող տկտկացնի, որքան սիրտն ուզի: Մեղմի տառը, նրա «նկարը» տեսնի էկրանին: Դա անի, երբ հավեսը կգա: Մեկ էլ տեսար, արդեն սովորել է տառերի գույնն ու չափերը փոփոխել: Մենք նրան գործիք- խաղալիքներ տվեցինք: Մենք խաղ հորինող չենք, առավել ևս՝ 3 տարեկանի համար: Գործիքներն ունի, ինքը կհորինի իր խաղը և կխաղա:

Արեգը կես ժամից ավելի ծոմոեց իր անվան Ա տառը, մեծացրեց-փոքրացրեց, գունավորեց, ինչ ասես բերեց էս խեղճ տառի գլխին՝ հրճվելով, գրնգուն ծիծաղելով, խոսել-բլբլալով, ու հիմա շատ է սիրում իր ընկեր Ա-ին: Հասցրել է ընկերանալ գ տառի հետ:

Մեր գործը նրա համար միջավայր պահովելն է, այն միջավայրը, որը մի տեսակ տերմինի է վերածվել, իսկ իրականում չկա կամ կա ինչ կար: Ոչ թե միջոցներ չկան, այլ մեր կամքը չկա: Մենք դարձյալ կարկատանանման մի տարբերակ ենք ընտրում՝ մի քիչ սրանից, մի քիչ նրանից: Ու յուր ենք գնում: Գուցե այդպես հեշտ է, բայց բոլորովին անօգուտ ու վնասակար: Արժե՞ վնասակարի համար ինչ-որ բան անել:

Մյուս դեպքում, երբ դիմացը համակարգիչն է կամ վրձինն ու թուղթը, մենք նրա կյանք ներխուժելու կարիքն էլ չունենք:

Համակարգչով կմեծացնի տառը, կփոքրացնի, կծոմոի, գույնը կփոխի, բզբզալով նոր հնարքներ կգտնի: Ու... նկարներն իրեն ծանոթ են, իր խաղալիքներն են: Կուզի իմանալ տառ-նկարի անունը, թող իմանա: Ինչպես կիմանա՝ իր որոշելիքն է: Կդիմի մեզ կասենք: Չի դիմի, ուրեմն դրա կարիքը դեռ չունի: Կդիմի հասակակցին, որն այդ տառին արդեն ծանոթ է, ասել է՝ նրան ավելի է վստահում, որովհետև նա ավելի հասկանալի է: Հենց ձանձրացավ, կթողնի խաղը: Հետո նորից կսկսի: Նա տեսնում է, հասկանում է, որ դուք տառեր չեք մուտքագրում, այլ՝ տառերի խումբ: Կարո՞ղ եք մտնել իր խաղի մեջ, իր հորինած խաղը խաղալ, խաղացեք: Չեք կարող, թողեք, թող մենակ կամ ընկերների հետ խաղա:

Հինգ տարեկանն արդեն տառախումբ է «տկտկացնելու»: Նա արդեն հասկանում է, որ տառերի խումբը կարող է ինչ-որ բան նշանակել: Ուրեմն կփնտրի՝ իրեն անհրաժեշտ տառախումբը: Գուցե սա այլ խաղի մաս լինի կամ այս խաղը միանա մեկ ուրիշի, գուցե իր ցանկության իրագործման միջոց լինի: Լիքը ճանապարհներ կան դեպի տառ ու բառ: Թեթև, բնականոն զարգացում, թեթև, բնականոն ընթացքով:

Կամաց-կամաց խճանկարը կհավաքվի, կդառնա ամբողջական: Մենք էլ մասնակիցը կդառնանք, ընկերն ու համակիրը կլինենք, իսկ տառն ու բառը՝ խաղալիք: Հարմար ժամանակ և հարմար իրավիճակ... մենք էլ՝ խաղընկեր

Հիմա կասեն՝ էս ինչ ձևեր են, ինչի համար են:
Ձեր աչքը մի կողմ դրեք ու երեխայի աչքով նայեք.

- այդպես հավես է.
- այդպես հեշտ է.
- այդպես հետաքրքիր է.
- այդպես չեն վախենում.
- այդպես կարող են հազար անգամ խաղալ.

- այդպես կարող են սխալվել և սխալը ուղղել.

- այդպես...

Վերջապես վերանում է կենդանական վարժանքը.

- Միրուն գրի, թե չէ...

Տերմին ենք հորինել՝ մանր մոտորիկայի զարգացում. ա՛յ նպատակ: Ամբողջ ուժով լարում են մկանները, ինչ է թե գիծն ուղիղ քաշեն: Էհ, թող մի քիչ էլ ծուռ լինի, հո աշխարհը շուռ չեկավ:

Դրա փոխարեն ի՞նչ հաճույք է ծեփամածիկով կամ կավով խաղալը, հարազատների համար բաժակ-նվեր պատրաստելը, չէ՞ որ իրեն բոլորն են հարազատ, կնվիրի, կտվորի նվիրել, խաղաղ ապրել, խաղաղ գրել կամ չգրել, այլ մուտքագրել: Մեկ է, ուզես-չուզես, ժամանակները փոխվում են, գործիքներն էլ հետը: Բա որ տառն ու բառը քանդակի, խմորով թխի, թխածն ուտի, թխածը բաժանի: Ինչո՞ւ չենք թողնում երեխաներին՝ պայծառ, անվերջ զարմացող ու հիացող 3-4-5 տարեկաններին զարմանալ ու հիանալ, անել այն, ինչ կարող է, մնացածը՝ ինչ լինելու կլինի ու ճիշտ կլինի: Ինչու չենք թողնում, որ երջանիկ ապրեն: Որտեղի՞ց այդ անսիրտ մաքսիմալիզմը մեր երեխաների նկատմամբ:

Մեկ է՝ նա իր խաղն է խաղում կամ ապրում, թող խաղալիքը սիրելի լինի: Թող տառն ու բառը գունեղ-բազմազան լինեն, շուռումուռ տա, գցի-բռնի՝ ինչպես գնդակը: Տեսնենք ոնց չի սիրի այդ բառն ու տառը:

Արեգը լուսատիտիկի մասին էր պատմում:

- Գիտե՞ս, լուսատիտիկը նստող լույս է, այսինքն՝ լույս ու տիտիկ: Միրուն ա, չէ՞:

Չիմացանք էլ՝ բառն էր սիրուն, թե տիտիկ անող միջատը:

- Գիտե՞ս, Արեգ, լուսատիտիկին նաև կայծոռիկ են ասում:

Անմիջապես գլխի ընկավ.

- Կայծը փոքր կրա՞կն է (ու բռնեց խաղալիքը), ուրեմն կարող ենք լույսոռիկ էլ ասել, կայծատիտիկ էլ:

Լսել էր պետք Արեգի հրճվանքով լցված քրքջոցը: Լույսոռիկ, կայծատիտիկ, ինչ հավես է, չէ՞ ...

Դե, փորձիր 4 տարեկան Արեգի նմանին նստեցնել տետրի դիմաց, տանջել, որ ուղիղ գրի: Եթե կարողանա էլ, չի գրի, որովհետև նա պարտադրանք չի հանդուրժում, որովհետև նա հայտնագործող է. այդպիսին են բոլոր երեխաները:

5 տարեկանում ամեն ինչ իր տեղն է ընկնում-հավաքվում, սանն արդեն կարող-հմուտ է: